

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

38րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 44 (1894) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 24, 2018
VOLUME 38, NO. 44 (1894) SATURDAY NOVEMBER 24, 2018



Պաշտօնաթերթ՝
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



Կոչ Ամերիկահայության «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Թելեթոնին Առթիվ

Ժողովրդային թաշտայ յեղափոխութեան յաղթանակով վերականգնեցաւ Հայ ժողովուրդի հաւատքը Հայրենի պետութեան ու երկրի ապագայի նկատմամբ: Այսօր, Հայաստանի նոր իշխանութիւնները կը վայելեն մեր բոլորի վստահութիւնն ու աջակցութիւնը:

Վերջին ամիսներուն իրականացան զգալի փոփոխութիւններ, որոնց ի արդիւնք, վերացան նախորդ համակարգի արատաւոր բազմաթիւ երեւոյթներ: Պետական մարմինները սկսան առաջնորդուիլ թափանցիկութեան ու ժողովուրդին հաշուետու դառնալու սկզբունքով:

Նոյեմբեր 22-ին՝ Միացեալ Նահանգներու Գոհաբանութեան օր տեղի պիտի ունենայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան դրամահաւաք-թելեթոնը, որու ընթացքին Ամերիկահայութիւնը առիթը պիտի ունենայ իր նպաստը բերելու Հիմնադրամի ծրագիրներուն:

Սոցիալ Դեմոկրատ Գնչակեան Կուսակցութիւնը առաջին իսկ օրէն միշտ եղած է հաւատացողը Հիմնադրամի առաքելութեան եւ նպատակներուն: Արցախի Հանրապետութեան եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ անոր իրականացուցած ծրագիրները տուած են շօշափելի արդիւնքներ, որոնք նպաստած են որպէսզի մեր ժողովուրդի գաւակները կառչած մնան իրենց հայրենի հողին:

Առ այդ, կոչ կ'ուղղենք Ամերիկահայութեան՝ վերանորոգուած եռանդով մասնակից ըլլալու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան դրամահաւաքին ու իրենց առտածեռն նուիրատուութիւններով նպաստելու հայրենաշինութեան սրբազան գործին:

Սոցիալ Դեմոկրատ Գնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

«Կատարած ենք Մեր ժողովուրդի Առաջ Ստանձնած Բոլոր Պարտաւորութիւնները». Նիկոլ Փաշինեան

Նոյեմբեր 20-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ իր տուած բոլոր խոստումները իրականացած են: «Խորհրդարանական ընտրութիւնների քուէարկութեան օրուայ դրութեամբ մենք կատարել ենք մեր ժողովրդի առաջ ստանձնած բոլոր պարտաւորութիւններն՝ առանց բացառութեան», շեշտեց Եաշինեան:

Վարչապետը թուարկեց վեց կէտեր ու յայտարարեց, որ Հայաստանի մէջ իշխանութիւնը ամբողջութեամբ վերադարձուած է ժողովուրդին:

«Մենք խոստացել էինք, որ եթէ Հայաստանի ժողովուրդն արտայայտի իր կամքը, մենք կ'ապահովենք Սերժ Սարգսեանի եւ նրա թիմի հեռացումը իշխանութիւնից, ընդ որում՝ բացարձակապէս խաղաղ ճանապարհով: Այդ պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է: Մենք խոստացել էինք, որ Հայաստանում ընտրութիւնների արդիւնքների կեղծման փորձն արմատախիլ կ'արուի, իշխանութեան ձեւաւորումը տեղի կ'ունենայ բացառապէս ժողովրդի ազատ



Նիկոլ Փաշինեան Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքին

կամարտայայտման միջոցով: 2018 թուականի Սեպտեմբերին տեղի ունեցած Երեւանի աւագանու եւ Հոկտեմբերին տեղի ունեցած ՏԻՄ ընտրութիւնների արդիւնքներով՝ պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է: Երրորդ՝ մենք խոստացել էինք անգիջում պաշար մղել կաշառակերութեան դէմ, պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է, իհարկէ կաշառակե-

րութեան դէմ պաշարը շարունակուում է, եւ ժողովրդից մանտաթ ստանալու դէպքում մենք այդ պաշարը կը շարունակենք», - ըսաւ Փաշինեան:

Վարչապետի պաշտօնակատարը շարունակեց՝ խոստացած էինք վերացնել արհեստական տնտեսական մենաշնորհները, եւ այսօր

Շար.ը էջ 5

ՍԴՀԿ Պատուիրակութեան Հանդիպումը Արցախի Նախագահ Բակո Սահակեանի Հետ

Երկուշաբթի, Նոյեմբեր 19-ին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ գլխաւորութեամբ Կեղրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեանի հանդիպում ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի հետ, որ Լոս Անճելըս ժամանած է մասնակցելու համար «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնին:

Նախագահ Սահակեան առաջին հերթին կարեւոր նկատեց հայկական բոլոր կազմակերպութիւններու աջակցութիւնը Հիմնադրամի աշխատանքներուն, որպէսզի ան կարողանայ իրագործել իր բոլոր ծրագիրները: Այս ասպիւս նախագահը գնահատեց Հնչակեան Կուսակցութեան անշեղ կեցուածքը Հիմնադրամին սատարելու ուղղութեամբ:

Նախագահ Սահակեան նաեւ անդրադարձաւ համահայկական խորհուրդ մը ստեղծելու շուրջ անցեալին եղած քննարկումներուն, նման բարձրագոյն մարմինի մը ստեղծումը նկատելով խիստ կարեւոր քայլ՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն սատարելու ուղղութեամբ:

Ընկ. Սարաֆեան իր շնորհակալութեան խօսքին մէջ վերահաստատեց Կուսակցութեան անշեղ



Նախագահ Բակո Սահակեանի եւ ՍԴՀԿ-ի միջեւ կայացած հանդիպման մասնակիցները

կեցուածքը՝ մեր զոյգ հանրապետութիւններուն եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին գորակցելու ուղղութեամբ, անկախ թէ Հայաստանի օրուայ իշխանութիւններուն նկատմամբ ինչպիսի դիրքորոշում ունեցած ըլլանք:

Նախագահ Սահակեան ներկայացուց նաեւ Արցախեան հարցի լուծման հայկական կողմի տեսակէտները ու վերջին զարգացումները: Ան անդրադարձաւ նաեւ իրանի նկատմամբ Ամերիկեան պատժամիջոցներու տարածաշրջանի ներս հաւանական ազդեցութեան:

Արցախի Հանրապետութեան նախագահի կողքին հանդիպումին ներկայ էին իր աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Պապայեան, Ուաշինկթընի մէջ Արցախի ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս՝ Արմէն Պալուրթեան եւ Հիւպատոսի օգնական Ռազմիկ Ստեփանեան:

ՍԴՀԿ պատուիրակութեան մաս կը կազմէին Կեղրոնական Վարչութեան եւ արեւմտեան Ամերիկայի Վարիչ մարմինի անդամներ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Պայքար ԲՊԿ-ի ու ՀՀԿ-ի Միջև

ԿՈՐԻԻՆ ՍԱՆՈՒԿԵԱՆ

Խորհրդարանական ընտրութիւններն աննախադէպ են լինելու մի շարք առումներով: Մեզ ոչ միայն արտահերթ, այլ նաեւ արտառոց ընտրութիւններ են սպասուում:

Բացի ընտրակաշառքից կամ գոնե դրա «ափաշքար» կիրառումից՝ միւս բոլոր արատաւոր երեւոյթներին ակնատես ենք լինելու՝ տեղական «տասովչիկները» օգտագործումից մինչեւ վարչական ռեսուրսի չարաչառում (բնականաբար՝ «Քաղաքացիական պայմանագրի» կողմից):

Յետանկախական Հայաստանում սա առաջին դէպքն է, երբ ԱԺ-ն արձակուում է սահմանադրական ժամկէտից շուտ, այն էլ՝ սեփական կամքին հակառակ ու արտաքին ճնշման արդիւնքում:

Սա նաեւ առաջին դէպքն է, երբ խորհրդարանական ընտրութիւններից առաջ աւելի մոդալիկ է երեւալ իշխանամէտ, քան ընդ-

Հնտրացուցակում յայտնուած միւս ուժերը, մեծ հաշուով, մասնակցում են օլիգարխական սկզբունքով կամ խորհրդարանում մի կերպ յայտնուելու նպատակով: Բացի ՀՀԿ-ից ու մասամբ նաեւ «Սասնայ ծուրից» եւ ՀԾԴ-ից, ընտրութիւններին մասնակցող միւս 7 ուժերը կա՛մ Նիկոլ Փաշինեանին չեն քննադատում, կա՛մ քծնում են նրան: Գրեթէ բոլորը վախենում են «սեւի» պիտակին արժանանալ ու արդիւնքում յայտնուում են էդմոն Մարտիկեանի կամ Արամ Սարգսեանի պէս կոմպլեքսաւորուած կարգավիճակում:

ՔՊԿ-ն ու ՀՀԿ-ն են լինելու այս ընտրութիւնների հակադիր բեւեռները եւ խորհրդարան անցնելու հիմնական ֆաւորիտները (բնականաբար՝ մեծ ու փոքր չափերով):

Իր առանձին «նիշան» է փորձելու զբաղեցնել «Սասնայ Ծուրը»: Կը կարողանա՞յ, թէ՞ ոչ, կախուած է բազմաթիւ գործօններից: Բլից-կրիզային ընտրարշա-

Իւրայինների Քողարկուած Սեղադրանքը Սերժ Սարգսեանին

ՀԱՅԿ ԴԱԹԵԱՆ

Factor.am-ի հետ հարցազրույցում ՀՀԿ առաջին փոխնախագահ, ԱԺ արտահերթ ընտրութիւններում ՀՀԿ համամասնական ցուցակը գլխաւորող Վիգէն Սարգսեանը, անդրադառնալով Սերժ Սարգսեանի հրաժարականի պատճառներին, յայտարարել է, որ պատճառը կամ առիթը Սերժ Սարգսեանի երրորդ ժամկէտի պաշտօնավարումն էր. «Միգուցէ, դրա պատասխանն աւելի լաւ կը տայ պատմութիւնը: Միգուցէ դա ընդամէնը դրդապատճառ էր: Եթէ չիշուէ էք, նախկինում էլ եղել են բաւականին լայն դժգոհութիւններ առաջացրած դրդապատճառներ՝ ինչպէս «էլեկտրիկ Երեւանը», երթուղային տաքսիների ուղեվարձի բարձրացումն, Թումանեանի այգու խնդիրը եւ այլ դէպքեր: Տարիներ անց պատմաբանները պէտք է ասեն, թէ որն է եղել դրդապատճառը, եւ որն է եղել իրական պատճառը: Առիթը, անշուշտ, եղաւ այսպէս կոչուած՝ երրորդ ժամկէտի առաջադրումը, որովհետեւ վարչապետութիւնը դա երրորդ ժամկէտ չէ: Եթէ այդպէս նայենք, դա չորրորդ ժամկէտն էր, մինչեւ նախագահ դառնալը Սերժ Սարգսեանը վարչապետ եղել է»,- յայտարարել է Վիգէն Սարգսեանը:

Սերժ Սարգսեանի եւ ՀՀԿ-ի հեռացումից վեց ամիս անց սա ուշացած խոստովանութիւն է, որն արւում է Սերժ Սարգսեանի առանցքային կադրերից մէկի կողմից: Վիգէն Սարգսեանի այս մեղադրական խոստովանութեան մէջ թերեւս նաեւ ինքնամեղադրանք կայ՝ ուղղուած ողջ ՀՀԿ էլիտային: Չմոռանանք, որ այդ նոյն ՀՀԿ վերնախաւը Մարտ-Ապրիլ ամիսներին, երբ քննարկուած էր վարչապետի թեկնածութեան հարցը, քար ծակող փաստարկներ էր ներկայացնում, թէ որքան ճիշտ ու պատմական քայլ է Սերժ Սարգսեանի վերստին վարչապետ կարգելը: Ո՛չ Վիգէն Սարգսեանը, ո՛չ էլ միւսները այն ժամանակ Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու հարցը չէին քննարկում՝ ընդվզում առաջացնելու համատեքստում:

Կար՝ Սերժ Սարգսեանն էր, չկար՝ Սերժ Սարգսեանն էր: Բայց Վիգէն Սարգսեանի այսօրուայ խոստովանութիւնը թերեւս ակնարկ է այն մասին, որ ժամանակին կուսակցութեան միահեծան կառավարման մամլիչը իրենց թոյլ չի տուել ազատ արտայայտուել:

Յիշեցնելով նախկին դժգոհութիւնների չմարած ալիքները՝ Վիգէն Սարգսեանը կարծես նաեւ ակնարկում է, որ Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու որոշումը եղել է ոչ թէ ՀՀԿ-ի որոշումը, այլ հենց Սերժ Սարգսեանինը: Կուսակցութիւնն այն ժամանակ Սերժ Սարգսեանի կցորդն էր, եւ առաջնորդի անվերապահ հեղինակութիւնը անգամ չէր էլ քննարկուում: Ցատկանշական է, որ հանրային դժգոհութիւնների տեղիք տուած

իրադարձութիւնների ցանկում Վիգէն Սարգսեանը չի նշում Սասնայ Ծուրի պատմաբանութիւնը, որն իր մասշտաբներով եւ լրջութեամբ ամենախոշորն էր, հետեւանքներն էլ անդառնալի եղան, քանի որ ունեցանք գոհեր:

Վիգէն Սարգսեանը նաեւ ասել է, որ ՀՀԿ-ն ունի 150 հազար անդամ, որոնցից 7 հազարը հեռացել են կուսակցութիւնից: Սա թերեւս նշանակուած է, որ ՀՀԿ-ն առաջիկայ ընտրութիւններում ակնկալում է գոնէ 150 հազար ձայն՝ հարազատ կուսակիցների կողմից:

Եթէ Վիգէն Սարգսեանը բաւարար անկեղծութիւն ունենար, ապա նա ՀՀԿ-ի ղեկավարութեան անունից նախ ներողութիւն կը խնդրէր հայ ժողովրդից, ապա նաեւ 150 հազար կուսակիցներից մեծ մասից, ովքեր ակամայից դարձել են Սերժ Սարգսեանի իշխանատենչ քաղաքականութեան տուժածները: Այդ 150 հազար ՀՀԿ-ականները համաձայն եղե՞լ են, որ Սերժ Սարգսեանը ստանձնի երկրի երրորդ ժամկէտի կառավարումը: Ընդհանրապէս ՀՀԿ վերնախաւը հարկ համարե՞լ է այդ հարցը քննարկել այդ 150 հազար ՀՀԿ-ականների հետ, թէ՞ Սերժ Սարգսեանի որոշումներն անքննելի էին: Եթէ հիմա Վիգէն Սարգսեանը՝ որպէս ՀՀԿ ցուցակը գլխաւորող անձ, ակնկալում է գոնէ իւրայինների քվեները, ապա պէտք է անդրադառնա նաեւ այս հարցերին, հակառակ պարագայում ՀՀԿ-ին չեն հասկանա նաեւ իւրայինները, եւ ընտրութիւններից կարող է յանկարծ պարզուել, որ ՀՀԿ-ն երբեք էլ 150 հազար անդամ չի ունեցել:

«ՀԱՅԵԼԻ»

ԲՊԿ-ի հիմնական մրցակից ՀՀԿ-ն էլ է հրապարակաւ հրաժարուել 1-ինը լինելու հաւակնութիւնից եւ պայքարում է 2-րդ տեղի համար: Պարզ է, որ ստեղծուած իրավիճակում ՀՀԿ-ն այլ բանի չէր էլ կարող հաւակնել, բայց ամէն դէպքում ուշագրաւ է, որ այս ընտրութիւնների, թերեւս, միակ ուժը, որը Նիկոլ Փաշինեանի գլխաւորած դաշինքին ընդդիմութիւն է, չի ձգտում իշխանութեան

դիմադիր:

Առաջին անգամն է, որ բացի «Իշխանութեան կուսակցութիւնից», այսինքն՝ «Իմ քայլը» դաշինքի անուան տակ հանդէս եկող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնից, միւսները ոչ միայն չեն հաւակնում իշխանութեան, այլ նոյնիսկ հրապարակաւ են ասում, որ ձգտում են առաւելադրյալ 2-րդը լինելուն: Հասկանալի է, որ դա պայմանաւորուած է Ապրիլ-Մայիսին տեղի ունեցած իշխանափոխութեամբ եւ առկայ էջֆորիկ տրամադրութեամբ, բայց ամէն դէպքում երեւոյթն աննախադէպ է:

Օրինակ՝ եթէ Գագիկ Ծառուկեանը 2007-ի, 2012-ի եւ 2017-ի ԱԺ ընտրութիւններից առաջ յայտարարում էր, որ ԲՀԿ-ն հաւակնում է «50+1» տոկոսի, այսինքն՝ խորհրդարանական մեծամասնութեան, ապա այժմ ծպտուն չկայ այդ մասին: Ծառուկեանի հաւակնութիւնները անհարմարութեան աստիճանի համեստացել են:

ՔՊԿ-ի հիմնական մրցակից ՀՀԿ-ն էլ է հրապարակաւ հրաժարուել 1-ինը լինելու հաւակնութիւնից եւ պայքարում է 2-րդ տեղի համար: Պարզ է, որ ստեղծուած իրավիճակում ՀՀԿ-ն այլ բանի չէր էլ կարող հաւակնել, բայց ամէն դէպքում ուշագրաւ է, որ այս ընտրութիւնների, թերեւս, միակ ուժը, որը Նիկոլ Փաշինեանի գլխաւորած դաշինքին ընդդիմութիւն է, չի ձգտում իշխանութեան:

ւր, «ուշտինգային» ընտրակարգը եւ ընտրական գործընթացներին մասնակցելու փորձի բացակայութիւնը զգալիօրէն նուազեցնում են այդ կուսակցութեան հնարաւորութիւնները:

Մի խօսքով, Դեկտեմբերի 9-ին մեծ անակնկալներ պէտք է սպասել: ՔՊԿ-ից բացի խորհրդարանում յայտնուելու է թիւ մէկ շանսն ունի ՀՀԿ-ն (յատկապէս «ուշտինգային» եւ միակ ընդդիմութիւնը լինելու գործօնները հաշուի առնելով):

«Ռեյտինգային» հաշուին խորհրդարան կը փորձի սողոսկել նաեւ ԲՀԿ-ն: Միւսների մասով, բացի «Սասնայ Ծուրից», ամէն ինչ պարզ է՝ նրանք դուրս կը մնան:

Այս ընտրութիւններում կան փոքր ինտրիգներ: Դրանք հետեւեալն են՝

-Քանի՞ տոկոս «կը խփի» ՔՊԿ-ն եւ արդեօք Փաշինեանի գլխաւորած ցուցակը աւելի շատ կը հաւաքի ԲՀԿ-ն ու արդեօք կը յայտնուի խորհրդարանում,

-Քանի՞ տոկոս կը ստանայ ՀՀԿ-ն որպէս ընդդիմութիւն,

-Նիկոլ Փաշինեանին կցուելուց յետոյ քանի տոկոս ձայն կը հաւաքի ԲՀԿ-ն ու արդեօք կը յայտնուի խորհրդարանում,

-«Սասնայ Ծուրը» կը յաղթահարե՞ն անցողիկ շէմը, թէ՞ ոչ: Մնացած առումներով ամէն ինչ կանխատեսելի է ու ձանձրալի: «70Թ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massisweekly.com
Updated every Frida

Ձեր Ծանուցումները
Վստահեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԵ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին Թիկնապահ Տրամադրելու Առաջարկը Ձախողեցաւ

Վեհափառի անվտանգութիւնը պէտք է պահպանէ ժողովուրդը. եթէ այսօր Վեհափառը չի կրնար շրջիլ ժողովուրդին մէջ, այդ իր խնդիրն է: Այս մասին, 16 Նոյեմբերին, Ազգային ժողովէն ներս «Յատուկ պետական պաշտպանութեան ենթակայ անձանց անվտանգութեան ապահովման մասին» օրէնքին մէջ լրացումներ կատարելու մասին օրինագիծի քննարկման ժամանակ յայտարարած է «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Սասուն Միքայէլեանը: Նշենք, որ օրինագիծը, որ կը վերաբերէր Ամենայն Հայոց կաթողիկոսի անվտանգութեան, տապալեցաւ, կողմ էր ընդամենը 28 պատգամաւոր: «Ելք»-էն Ալեք Սիմոնեանն ալ նշեց. «Այսինքն մենք Ամենայն Հայոց կաթողիկոսին պէտք է պաշտպանենք ամենայն հայոց ժողովրդից: Եթէ կան ինչ-որ մարդիկ, որ կարող են ինչ-որ ոտնձգութիւն անել, կառավարութիւնը դրա պատասխանը տուել է: Վերածել սա, թէ ով է աւելի քրիստոնեայ, ես նման մօտեցմանը դէմ եմ, մնում էր կաթողիկոսին հայ ժողովրդից պաշտպանենք»:

ՀՀ-էն Մարգարիտ Եսայեանն ալ ըսած է, եթէ կաթողիկոսը չենք

պաշտպաներ, ուրեմն եկէք վարչապետն ալ չպաշտպանենք հայ ժողովրդէն. «Ումից է պաշտպանուում վարչապետը, հայ ժողովրդից»:

ՀՀ-էն Յակոբ Յակոբեանը աւելի կտրուկ էր. «Մենք վեհափառին ժողովրդից չենք պաշտպանում, այլ պաշտպանում ենք սեռական եւ կրօնական փոքրամասնութիւնից, որոնք դրսից ֆինանսաւորում են եւ պայքարում են հայկական պետականութեան եւ հայ հաւատքի դէմ»:

Իսկ արդէն քուէարկութենէն ետք Սասուն Միքայէլեանը անդրադառնալով օրինագիծին կողք քուէարկած 28 ՀՀ-ականներուն, ըսած է. «Ես խորհուրդ կը տայի յաջորդ խորհրդարանում այս 28 հոգուն դասել սրբերի դասին: Երկրորդ, իրենց կառավարութեան ժամանակ է ատելութիւն առաջացել կաթողիկոսի նկատմամբ: Նրանք պէտք է այդ ժամանակ կարողանային կանխել դա: Եթէ այսօր մեր կաթողիկոսը լինէր իր դիրքերում, երբեք չէր նման օրէնք չէր մտնի ԱԺ: Մենք պաշտում ենք մեր եկեղեցին, բոլորս էլ առաքելական եկեղեցու հաւատացեալ ենք: Մեռնեմ Աստուծոն, ոչ թէ ձեւական այս քարիերիսթներին»:

ՔՊ-ի Հետ Դաշինք Կազմելը Քաղաքական Համակարգի Առողջութեան Տեսանկիւնէն Սխալ Որոշում Պիտի Ըլլար. Մարութեան



Ետմոն Մարութեան հարցազրոյց կ'ունենայ «Ազատութիւն» ռատիոկայանի վերլուծական Հրայր Թամրազեանի հետ

«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտմոն Մարութեանը չի տեսներ կողմնակի կազմելու որեւէ հնարաւորութիւն «Իմ քայլը» դաշինքի հետ: «Ազատութեան» «Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ Մարութեանը պարզաբանած է՝ պատեհապաշտ չեն եւ որեւէ ուժի չեն կրնար միանալ, պարզապէս միանալու համար: «Ես չեմ տեսնում քողարկողի որեւէ հնարաւորութիւն, որովհետ եւ ակնյայտ է, որ իշխանութիւնը ստանալու է ձայների մեծամասնութիւնը: Հետեւաբար, «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնը, ես ինքս, մենք ունեցել ենք էլ հնարաւորութիւնը լինելու ինչ-որ տոկոսով ներկայացուած «Իմ քայլը» դաշինքի մէջ, մենք մերժել ենք էլ առաջարկները, մենք չենք գնացել դրան: Նաեւ այդ պատճառով մեզանից մարդիկ են դուրս եկել, գնացել, միացել են էլիտեի: Մենք տարբեր ենք, մենք ասել ենք, որ արհեստական, ձեւական, գոտ մանտաթ ունենալու համար մենք պատեհապաշտ չենք, մենք որեւէ ուժի չենք կարող միանալ, միանալ՝ ուղղակի միանալու համար», - ըսած է Մարութեանը շարունակելով. - «Իմ քայլը» ըստ էութեան ստեղծուել է

«Քաղաքացիական պայմանագրի» (ՔՊ) պագայի վրայ, այնտեղ երկրորդ ուժը «Առաքելութիւն» կուսակցութիւնն է, որը ներկայացուած չի եղել ո՛չ նախորդ, ո՛չ դրանից առաջուայ որեւէ խորհրդարանում»:

«Երբ որ յեղափոխութիւնը եղել էր, քննարկուում էր, որ մենք բոլորով միասին գնանք, դաշինքի անունը դեռեւս քննարկուում էր, յայտնի չէր, թէ ինչ կը լինի, բայց երկրի քաղաքական համակարգի առողջութեան տեսանկիւնից դա սխալ որոշում կը լինէր, եթէ մենք դրան գնայինք: Դա կը լինէր գոտ հետեւալը, որ կայ աւելի արագ ընթացող ձեւալնութեան եւ մենք ուզում ենք նստել դրա մէջ, որովհետեւ հետ է տեղ հասնել: Մենք տեղ հասնելու խնդիր չունենք, մենք մեր գաղափարները պահելու, մեր տեսակը պահելու, քաղաքական համակարգն առողջացնելու խնդիր ունենք, հակակշիռ լինելու խնդիր ունենք», ըսած է Մարութեանը՝ շարունակելով. «Վերջին հաշուով նոյն Նիկոլ ֆաշինեանը եւ մեր միւս գործընկերներն անգիր գիտեն մեր տեսակը, մեր մօտեցումները, որովհետեւ էլ քննարկումները «Ելք»-ում ունեցել ենք, ուղղակի դրանք փակ են եղել, հիմա ես ձեզ խոստանում եմ՝ բաց կը տեսնէք խորհրդարանում»:

Վճարեկ Դատարանը Բեկանած է Ռոպերթ Քոչարեանի Կալանաւորումը Վերացնելու Որոշումը

Հայաստանի Հանրապետութեան Վճարեկ դատարանը բեկանած է ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ խափանման միջոց կալանաւորումը վերացնելու վերաքննիչ դատարանի որոշումը եւ գործը ուղարկեց նոյն դատարան՝ նոր քննութեան:

Վճարեկ դատարանը, քննելով ՀՀ վերաքննիչ դատարանի կայացուցած որոշման դէմ ՀՀ գլխաւոր դատախազի եւ Ռոպերթ Քոչարեանի պաշտպաններու ներկայացուցած բողոքները, որոշում կայացուցած է գլխաւոր դատախազի դիմումը բաւարարել մասնակիօրէն, իսկ Ռոպերթ Քոչարեանի պաշտպաններու վճարեկ բողոքը՝ մերժել:

Որոշումը օրինական ուժի մէջ կը մտնէ դատական նիստին ընթացքին անոր հրապարակման պահէն, վերջնական է, եւ ենթակայ չէ բողոքարկման:

ՀՀ գլխաւոր դատախազը վճարեկ բողոք ներկայացուցած էր վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու, ինչպէս նաեւ Ռոպերթ Քոչարեանի նկատմամբ իբրեւ խափանման միջոց կալանաւորումը կիրառելու մասին Առաջին ատեանի դատարանին որոշումը վերականգնելու վերաբերեալ, սակայն Վճարեկ դատարանը որոշում կայացուց գլխաւոր դատախազի բողոքը բաւարարել մասնակիօրէն՝ բեկանելով վերաքննիչ դատարանի որոշումը եւ գործը ուղարկել նոր քննութեան:

Վաչական Դազարեանը Կրկին Կալանաւորուեցաւ

Գլխաւոր դատախազութիւնը կը հաղորդէ, որ Վճարեկ դատարանը բաւարարած է գլխաւոր դատախազի տեղակալի բողոքը եւ ուժի մէջ թողած Սերժ Սարգսեանի խմբակցից Վաչական Դազարեանը կալանաւորելու որոշումը: Պետական պահպանութեան ծառայութեան պետի նախկին առաջին տեղակալ, Հայաստանի երրորդ նախագահի թիկնազօրի նախկին պետ Դազարեանը կալանաւորուած է:

Վաչական Դազարեանի նկատմամբ ամրան մեղադրանք առա-

ջադրուած է Բարձրատիճան պաշտօնատար անձանց էթիքայի յանձնաժողով ներկայացուցած յայտարարագրերուն մէջ իր ունեցած դրամական միջոցներու իրական չափի մասին յայտարարագրման ենթակայ տուեալները թաքցնելու, ապօրինի հարստանալու համար: Դազարեանը կալանաւորուած էր երկու ամիսով, եւ համաձայն չըլլալով դատարանի որոշման՝ այն բողոքարկած էր վերաքննիչ ատեան եւ ազատ արձակուած 1 միլիոն դրամ գրաւի դիմաց:

«Արտագնայ Աշխատանքի Մեկնածներու Եկամուտներու Հարկելու Ծրագիր Զիկայ»

Հայաստանի պետական եկամուտներու կոմիտէն (ՊԵԿ) պարզաբանում տարածած է ֆիզիկական անձանց եկամուտներու յայտարարագրման գործընթացի վերաբերեալ:

Նշելով, որ ֆիզիկական անձանց համատարած յայտարարագրման թեման լայնօրէն կը քննարկուի զանգուածային լրատուական միջոցներու եւ սոցիալական ցանցերու մէջ, ՊԵԿ տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժինը «անհրաժեշտ է համարում տեղեկացնել, որ նախքան նախագծի ներդրումն՝ այն պէտք է դրուի հանրային լայն քննարկման, ինչի ընթացքում վեր կը հանուեն խնդրի դրական եւ բացասական կողմերը»:

«Ինչ վերաբերում է արտագ-

նայ աշխատանքի մեկնած քաղաքացիների եկամուտների հարկման մեխանիզմին, ապա որեւէ նման նախագիծ կամ գաղափար առկայ չէ», - վստահեցուցած է ՊԵԿ-ը:

Տուեալ թեմային կառավարութեան արտահերթ նիստի ժամանակ անդրադարձած է նաեւ առաջին փոխվարչապետի պաշտօնակատար Արարատ Միրզոյեանը՝ վստահեցնելով, որ առանց լայն հանրային քննարկման որեւէ հարկային բեռի աւելացում չըլլար:

Անցած շաբաթ Հանրային ռատիոն հաղորդած էր, որ ՊԵԿ-ը շրջանաւորութեան մէջ դրած է նոր գաղափար, ըստ որում 2020-էն եկամտային հարկի վճարող պիտի դառնալու 18-65 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները:

Ընտրութիւններուն Կը մասնակցի 11 Քաղաքական Ուժ

ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններուն առաջադրուելու համար ԿԼՅ (կեդրոնական ընտրական յանձնաժողով) դիմած է 11 քաղաքական ուժ:

Մասնակցող ուժերն են՝ «Իմ քայլը» դաշինքը, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը, ՀՅԴ-ն, «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնը, ՀՀԿ-ն, «Մենք» դաշինքը, «Ազգային առաջընթաց» կուսակցու-

թիւնը, «Քրիստոնեայ-ժողովրդական վերածնունդ» կուսակցութիւնը, «Սասնայ ծներ» կուսակցութիւնը, «Օրինաց երկիր» կուսակցութիւնը, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Բակո Սահակեանի Փարիզ Այցի Կապակցութեամբ Ատրպէյճանը կը Սպառնայ Ֆրանսային



Արցախի նախագահ Բակո Սահակեան Փարիզի մէջ կը մասնակցի Եւրոպայի Հայերու Նուիրահաւաքին

Պաշտօնական Պաքուն կը սպառնայ վերանայիլ յարաբերութիւնները Ֆրանսայի հետ եւ բողոքի նոթա փոխանցել՝ Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանին փարիզի մէջ «հանդիսաւոր ընդունելութեան արժանացնելու համար»:

«Նման այցի հնարաւորութիւն տալով եւ ընդունելով ապօրինի վարչակազմի ներկայացուցիչները՝ Ֆրանսան դէմ կ'երթայ Ատրպէյճանի հետ երկկողմ յարաբերութիւններու ոգիին, ինչպէս նաեւ Փարիզի ու Պաքուի միջեւ ստորագրուած համաձայնագրերուն», - յայտարարած է Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Այս առումով, Լեռնային Ղարաբաղի նախագահական նստավայրը հաղորդած էր, որ նախագահ Բակո Սահակեանի զլխաւորած պատուիրակութիւնը աշխատանքային այցով մեկնած է Փարիզ, ուր հանդիպած է Ֆրանսա-Արցախ բարեկամութեան շրջանակի խումբ մը անդամներու, ինչպէս նաեւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

«Ատրպէյճանը դիւանագիտական խողովակներով բողոքի նոթա կը փոխանցի Ֆրանսային այս հարցի կապակցութեամբ», - յայտարարած է արտաքին գործոց նախարարութիւնը, ընդգծելով՝ սա նմանօրինակ առաջին դէպքը չէ: «Ֆրանսայի կողմէն հետեւողականօրէն իրականացուող եւ երկակի չափանիշներու վրայ հիմնուած այդ դիրքորոշումը կը ստիպէ Ատրպէյճանին վերանայիլ երկկողմ յարաբերութիւնները», - պնդած է Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Փորձագէտները կը փաստեն, որ Պաքուի այս կոշտ յայտարարութեան ու Փարիզի հանդէպ դժգոհութեան հիմքը միայն Ղարաբաղի նախագահի այցը չէ: Ատրպէյճանի մէջ չեն թաքցներ, որ հիասթափուած են Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մակրոնէն, որ Ֆրանսոֆոնիայի գազաթնափողովի շրջանակներէն ներս անցած ամիս այցելած է Երեւան, ջերմ հանդիպումներ ունեցած Հայաստանի նոր իշխանութիւններուն հետ, սակայն Պաքու չէ մեկնած:

«Եթէ Հայաստանի Հետ Համատեղ Նախագիծ Ըլլայ, Վանի Օդակայանը Թուրքիոյ Մէջ Կրնայ Ըլլալ Ամենամեծը». Կարօ Փայլան

Թուրքիոյ քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» (HDP) հայ պատգամաւոր Կարօ Փայլան մասնակցած է մշակութի եւ զբօսաշրջութեան նախարարութեան պիւտտէի քննարկումներուն:

Փայլանը, քննադատելով մշակուցի նախարարութեան ձեռնարկած շարք մը քայլերը եւ նախագիծերը, ըսած է. «Նախարարութիւնը ոչ մէկ տեսլական ունի վանի նահանգին համար: Հաւատացէք վանի օդակայանը տարողունակութեամբ կրնայ գերազանցել Անթալիոյ եւ Դալամանի օդակայանները: Վանի մէջ լուրջ քաղաքակրթութիւն կայ: Եթէ այնտեղ մասնագիտական նախագիծ իրականացուի, եթէ Հայաստանի եւ Վրաստանի հետ համատեղ նախագիծ ըլլայ, վանի օդակայանը թուրքիոյ մէջ կրնայ ըլլալ ամենամեծը: Օրինակ՝ վանի էտրեմիթ (պատմ Արտամէտ) շրջանը դարձաւ ինչպէս է: Վանը յայտնի է 4 հազար տարուան պատմութիւն ունեցող ուրարտական թագաւորութեամբ: Վանի մէջ հայկական եկե-



Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

ղեցի կայ, այնտեղ է նաեւ Արշիլ Գորկիի գիւղը: Սակայն այստեղ քաղաքապետարանի հոգաբարձուի յանձնարարութեամբ հայկական գերեզմանոցի վրայ լուսցարան կը կառուցէ», - ըսած է Փայլանը:

Ան յիշեցուցած է, որ հայկական գերեզմանատան վրայ կառուցուած լուսցարանը այդպէս ալ չէ կազմաքանդուած՝ թէեւ ժամանակին զբօսաշրջութեան եւ մշակուցի նախարարը հրահանգած էր քանդել գայն:

«Կը Հաւատանք, որ Ժողովրդավարական Ընտրութիւններու Շնորհիւ ՀՀ-ի Մէջ Պիտի Հաստատուի Օրինական, Վստահելի Կառավարութիւն». ԵՄ Դեսպան



Արարատ Սիրզոյեան եւ ԵՄ դեսպանները ընտրութիւններուն օժանդակելու պայմանագիրը ստորագրելու պահուն

Եւրոպական Միութիւնը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան եւ Շուէտը մօտ 2 միլիոն 920 հազար եուրօ չափակցուցած են՝ Հայաստանի մէջ Դեկտեմբեր 9-ին կայանալիք խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու իրականացման օժանդակելու նպատակով:

Առաջին փոփոխութեան պաշտօնակատար Արարատ Սիրզոյեանը, Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Փիլիթ Սվիթալսքին, Գերմանիոյ դեսպան Մաթիաս Քիսլըրը, Մեծ Բրիտանիոյ դեսպան ձուտիթ Ֆարնուորթը, Շուէտի դեսպանութեան գործերու հաւատարմատար Մարթին Ֆրետրիքսոնը, եւ Հայաստանի մէջ ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմայի Շարփը ստորագրած են «Հայաստանի մէջ ընտրական գործընթացներու աջակցութիւն» ծրագրի մեկնարկը ազդարարող փաստաթուղթ, որու հիման վրայ ալ գումարը պիտի յատկացուի:

Ծրագրի նպատակն է ունենալ

թափանցիկ, վստահելի, արդար, ազատ ընտրութիւններ, ստորագրելով փաստաթուղթ՝ յայտարարած է առաջին փոփոխութեան պաշտօնակատար Արարատ Սիրզոյեանը:

Ծրագրի նպատակն է ապահովել 2017 թուականի ընտրութիւններուն ներմուծուած ընտրողներու նոյնականացման սարքերու շարունակական կիրառումը, ապահովել քուէարկութեան օրը ընտրատեղամասերու եւ քուէարկութեան արդիւնքներու ամփոփման ուղիղ հեռաւարկումը 2000 ընտրատեղամասերէ, բարելաւել ընտրողներու գրանցման գործընթացը եւ այլն:

«Մի՛ վաճառէք ձեր ձայները, կաշառք մի՛ վերցնէք», - դիմելով Հայաստանցիներուն՝ ըսած է Հայաստանի մէջ Եւրոմիութեան դեսպան Փիլիթ Սվիթալսքին՝ յորդորելով գալիք ընտրութիւնները դարձնել Հայաստանի պատմութեան ընթացքին տեղի ունեցած լաւագոյն ընտրութիւնները, որոնք կրնան օրինակ դառնալ այլ երկիրներու համար:

Մնացականեան. Իրանը Հայաստանի Կարեւոր Գործընկերն է

Հայ-իրանական յարաբերութիւններու վրայ ինչպէ՞ս կրնան անդրադառնալ հակիրճական պատժամիջոցները, որոնց խստացման մասին կը խոստանայ Ուաշինկթընը: «ԹԱՍՍ» գործակալութեան այս հարցին ի պատասխան Արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Զոհրապ Մնացականեանը նշած է.

«Մենք յստակ ձեւակերպել ենք մեր դիրքորոշումը, մասնաւորապէս. մեզ համար սա անչափ զգայուն հարց է, քանի որ իրանը Հայաստանի կարեւոր գործընկերն է, որի հետ մենք հաստատել ենք տարածաշրջանային արդի գործադրումների համաթեքսթում Հայաստանի համար չափազանց կարեւոր նշանակութիւն ունեցող երկկողմ օրակարգ»:

Ան յիշեցուցած է՝ Հայաստանը առաջիններէն էր, որ ողջունած է 2015 թուականին միջուկային համաձայնագրի շուրջ բանակցութիւններու մէջ գրանցուած առաջընթացը:

«Մեր շահերին հետամուտ լինելու եւ տարածաշրջանային անվտանգութիւնն ապահովելու նպատակով մենք այժմ կապ ենք պահպան-

նում մեր բոլոր գործընկերների հետ՝ թէ՛ Ռուսաստանի, թէ՛ ԵՄ երկրների, եւ թէ՛ ԱՄՆ-ի ու Իրանի հետ: Պոլիթնի այցը Հայաստան նոյնպէս հնարաւորութիւն ստեղծեց ներկայացնելու մեր երկրի առջեւ ծառայած մարտահրաւերները եւ դրանցով պայմանաւորուած քաղաքականութիւնը», - ըսած է ԱԳ նախարարի պաշտօնակատարը:

Հարցին, յառաջիկային կը նախատեսուի արդեօք հանդիպում Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի հետ, Մնացականեանը պատասխանած է. «Մենք ունեցել ենք եւ այժմ էլ ունենք բաւականին յազմած օրակարգ ինչպէս երկկողմ, այնպէս էլ բազմակողմ ձեւաչափերում: Բնականաբար, պաշտօնական շփումների համար նոր հնարաւորութիւններ կը լինեն: Բայց միեւնոյն ժամանակ, անցած վեց ամիսների ընթացքում մենք շփուելու շատ առիթներ ենք ունեցել, այդ թուումը նաեւ միջազգային յարթութիւններում, լինի ՀԱՊԿ-ի կամ ՄԱԿ-ի շրջանակներում: Անցած շաբաթ հանդիպեցինք Ասթանայում»:

Համաեւրոպական Հեռախօսամարաթոնին Հանգանակուած է Մօտ 1 Միլիոն 242 Հազար Եւրօ



Աւարտած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի համաեւրոպական հեռախօսամարաթոնը: Նոյեմբեր 14-18 Եւրոպայի հայութիւնը հանգանակած է ընդհանուր առմամբ 1,242, 460 եւրօ:

Հեռախօսամարաթոնը մեկնարկած է Մարսէյլէն՝ ընդգրկելով Թուրքիոյ, Լիոնը, Փարիզը: Այնուհետեւ Չուրիցերիա, Գերմանիա, Յունաստան: Այս տարի հեռախօսամարաթոնի մասնակիցներուն թիւը աւելցած է 700-ով՝ հատելով 10 հազարի սահմանը: Ինչպէս կը յայտնէ «Հայաստան»

համահայկական հիմնադրամը, հեռախօսամարաթոնի գումարները պիտի ուղղուին Տաւուշի մարզի զիւղատնտեսական ծրագիրներու զարգացման, Արցախի մէջ արեւային ուժանիւթի ներդրման, նաեւ Հալէպի հայերու կարիքներուն:

Հեռախօսամարաթոն 2018-ի արդիւնքով Ֆրանսայի մէջ հանգանակուած է 1 միլիոն 137 հազար 746 եւրօ, Գերմանիոյ մէջ՝ 73 հազար 845 եւրօ, Չուրիցերիոյ մէջ՝ 19 հազար 717 եւրօ, Յունաստանի մէջ՝ 11 հազար 150 եւրօ:

Որքան Ծպտեալ Հայ Կայ Թուրքիոյ Մէջ

Ուաշինգթոնի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ դահլիճէն ներս վերջերս կայացած է ամերիկահայ լրագրող Աւետիս Հաճեանի «Գաղտնի ազգ. ծպտեալ հայեր» գիրքի շնորհահանդէսը: Հեղինակը կը պնդէ, որ այսօր Թուրքիոյ մէջ կը շարունակեն բնակիլ բազմաթիւ հայեր, որոնք Մեծ Եղեռնի յետնորդներն են եւ կը թաքցնեն իրենց ինքնութիւնը, կը հաղորդէ «Ամերիկայի ձայնը»:

Այսօր Թուրքիոյ մէջ բնակող բնակչութեան զգալի մէկ հատուածը ունի հայկական ծագում, սակայն կը խուսափի բացայայտ խօսիլ ատոր մասին, կը պնդէ «Գաղտնի ազգ. Թուրքիայի ծպտեալ հայեր» ծաւալուն աշխատութեան հեղինակը:

«Նոյնիսկ կրօնափոխ հայերը, որոնց անհրաժեշտ էր շուրջ հարիւր տարի, մինչեւ թրքական պետութեան կողմէն սահմանափակ ազատութեան ընծայուածը, կը հերքէին իրենց ազգային ինքնութիւնը: Եւ ատոր գլխաւոր պատճառը Եղեռնն էր: Առայսօր այդ առումով որոշակի վախ պահպանուած է, - ըսած է Հաճեանը:

Գիրքի հրատարակման նախորդած էին երկար տարիներու հետազոտական աշխատանք, բազմաթիւ հարցազրոյցներ, այցելութիւններ Թուրքիա եւ այլ երկրներ: Հեղինակը ընդգծած է, որ Հայոց ցեղասպանութեան տարիներուն բազմաթիւ հայեր կրօնափոխ եղան եւ չհեռացան իրենց հայրենիքէն, սակայն կորսնցուցին իրենց հայկական ինքնութիւնը: Այսօր անոնց մեծ մասը Մեծ Եղեռնի յետնորդներն են:

«Հրանդ Տիւքը կ'ըսէր, որ Թուրքիոյ մէջ կայ շուրջ 2 միլիոն իսլամացած հայ ազգաբնակչութիւն՝ գաղտնի հայեր: Վստահ չեմ, թէ կարելի է մարդահամար ընել, թէ

ոչ», - ըսած է գիրքի հեղինակը:

Հաճեանի կարծիքով ժամանակակից Թուրքիոյ մէջ դժուար է պարզել վերջնական ազգային ինքնութիւնը, քանի որ պետութիւնը որոշակի բարդութիւններ կը ստեղծէ ազգային փոքրամասնութիւններու հանդէպ: Բացի այդ, առկայ է բազմակի ինքնութեան գործօնը:

«Նախ, Թուրքիան միօրինակ մարդահամար կ'անցկացնէ, ուր հնարաւոր չէ պարզել որքան հայ կամ այլ ազգային փոքրամասնութիւն կայ: Բացի այդ շատ դժուար է սահմանել, ով հայ է, իսկ ով՝ ոչ, քանի որ եթէ ինչ որ անձի մեծ մասը Եղեռն վերապրած հայ է, ան իհարկէ կրնայ հայ համարուիլ, թէեւ կրօնը, ազգութիւնը փոխուած են եւ հայերէնին չեն տիրապետեր: Սակայն նոյն կերպ ան կրնայ համարուիլ Թուրք կամ քրիւտ, ուստի շատ դժուար է սահմանել, թէ ով հայ է, իսկ ով՝ ոչ՝, - ըսած է Հաճեանը:

Սակայն հեղինակը նշած է նաեւ, որ իր հետազոտական աշխատանքի ընթացքին հանդիպած է թրքացած, կրօնափոխ եղած հայերու, որոնք, բացայայտելով իրենց հայկական արմատները, չեն թաքցնել այդ փաստը: Որպէս արդիւնք, ըստ գիրքի հեղինակի, եղած են դէպքեր, երբ մարդիկ, տեղեկանալով իրենց հայկական ծագումնաբանութեան մասին, փորձած են այն համարել իրենց թրքական կամ քրտական ինքնութեան հետ:

Միջոցառման ժամանակ Հաճեանը համառօտ ներկայացուցած է իր աշխատութեան բովանդակութիւնը, իսկ աւարտին պատասխանած է ներկայներու հարցերուն հայկական ինքնութեան, արմատներու եւ հայապահպանութեան մասին:

Եւրոխորհրդարանը Կողմ է Թուրքիա-ԵՄ Բանակցութիւններու Պաշտօնապէս Առկախման



Եւրոխորհրդարանի Թուրքիոյ հարցերով գեկուցող Քեթի Փիրի ներկայացուցած է Թուրքիոյ վերաբերեալ իր հերթական գեկուցցին նախնական տարբերակը: 14 Նոյեմբերին, Սթրասպուրկի մէջ ներկայացուած փաստաթուղթին մէջ, Փիրի կոչ ըրած է պաշտօնապէս առկախելու ԵՄ-Թուրքիա բանակցութիւնները, քանի որ Թուրքիան չի համապատասխաներ «Քոփենհագընեան չափանիշներուն»:

Չեկոյցը անդրադարձած է 2016-ի յեղաշրջման փորձէն ետք Թուրքիոյ մէջ ծայր առած զանգուածային ձեռքարկութիւններուն, կալանաւորումներուն, աշխատանքէ հեռացման դէպքերուն, մամուլի եւ խօսքի ազատութեան սահմանափակումներուն: Կոչ եղած է հրատապ միջոցներ ձեռնարկելու քրտական հարցը խաղաղ քաղաքական գործընթացներու ճանապարհով լուծելու նպատակով: Փիրի դատապարտած է նաեւ ընդդիմադիր պատգամաւորներու կալանաւորման դէպքերը՝ կոչ ընելով Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին՝ հնարաւորինս արագ որոշում կայացնելու քրտամէտ » ժողովուրդներու դեմոկրատական» կուսակցութեան (HDP) նախկին համահարկազատ Սէլահատին Տէմիրթաշի գործով:

Միեւնոյն ժամանակ, ԵՄ գեկուցողը համոզուած չէ, որ Թուրքիոյ հետ բոլոր կամուրջները այրել պէտք չէ: Ընդգծուած է Թուրքիոյ դերը փախստականներու հիմնախնդրի յաղթահարման

հարցով եւ կոչ եղած է ԵՄ երկիրներուն՝ այս հարցով նիւթական աջակցութիւն ցուցաբերելու Թուրքիոյ:

Չեկոյցին նախագիծը նախ պէտք է հաստատուի Եւրոխորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովին կողմէ, որմէ ետք՝ Յունուարին կամ Փետրուարին, վերջնական քուէարկութեան պիտի դրուի ԵՄ-ի մէջ: Չեկոյցի՝ Թուրքիա-ԵՄ բանակցութիւններու առկախման կոչը ներառող հատուածի փոփոխութիւն չ'ակնկալուի:

Նշենք, որ Թուրքիա-ԵՄ բանակցութիւններու դադրեցման համար անհրաժեշտ է, որ Եւրոյան ձեռնաժողովը հանդէս գայ համապատասխան առաջարկով, իսկ ԵՄ անդամ երկիրներու առաջնորդները հաստատեն այդ առաջարկը:

Աւելցնենք նաեւ, որ նախորդ տարի՝ Թուրքիոյ վերաբերեալ տարեկան գեկուցող ընդունելու ժամանակ՝ Եւրոխորհրդարանը զգուշացուցած էր, որ եթէ Թուրքիոյ մէջ վերջին սահմանադրական փոփոխութիւնները իրաւական ուժի մէջ մտնեն, ուստի ԵՄ-ն պիտի պահանջէ պաշտօնապէս դադրեցնել ԵՄ անդամակցութեան բանակցութիւնները: Պատճառը այն է, որ ըստ վեներտիկի յանձնաժողովի գեկուցցին՝ Թուրքիոյ մէջ ներկայ կառավարման համակարգը համապատասխան չէ ուժեղ տարանջատման սկզբունքին հետ, որ կը հակասէ Քոփենհագընեան քաղաքական չափանիշներուն:

Կատարած Ենթ Բոլոր Պարտաւորութիւնները

Շարունակուած է 1-էն

որեւէ շուկայի մէջ մուտքի խոչընդոտներ եւ այլ սահմանափակումներ չկան: «Ի յայտ են գալիս եւ կը գան նոր խաղացողներ, հետեւաբար՝ պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է: Ոստացել էինք, որ Հայաստանում չեն լինի արտօնեալ անձինք եւ կ'ապահովուի օրէնքի առաջ բոլոր մարդկանց հաւասարութիւնը, պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է: Վեցերորդ՝ խոստացել էինք անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, պարտաւորութիւնը լիարժէք կատարուած է: Այս ամէնի եզրակացութիւնը հետեւեալն է՝ Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութիւնն ամբողջութեամբ վերադարձուած է ժողովրդին եւ իսկապէս պատկանում է ժողովրդին», - ըսաւ ան, շարունակելով՝ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացի իր ունեցած մէկ քուէով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն պիտի որոշէ երկրի յետագայ ճակատագիրը:

Անդրադառնալով «Մարտի

Մէկի» գործի շրջագիծէն ներս բնութեան ընթացքի, Նիկոլ Փաշինեան ըսաւ, - «Հիմա էլ հարցնում են, թէ Սերժ Սարգսեանին ինչի չեն բռնում, հիմա որ ասեմ՝ միւս շաբաթ բռնելու են, կ'ասէք խառնուած եմ իրաւապահների գործին: Շեշտադրումներ են անում, թէ յեղափոխութիւնը կազմակերպել է Սերժ Սարգսեանը եւ Միքայէլ Միանսեանը, սա ասողները յարգանք չունեն սեփական ժողովրդի նկատմամբ»:

Սերժ Սարգսեանի նկատմամբ իմ վերաբերմունքը չէ փոխուած, շեշտեց վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը, յաւելելով, որ «Մարտի Մէկի» քննութիւնը կ'ընթանայ ճիշդ ուղղութեամբ:

Նիկոլ Փաշինեանը՝ անդրադառնալով ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի ընտրութեան շուրջ ստեղծուած իրավիճակին ըսաւ, - «Մենք չենք պատրաստուիլ լուծութեան մասին Հայաստանի շահերուն առնչուող որեւէ հարց»: Ան յայտնեց, որ կը պատրաստուին գործընկերութեան միջապայրին մէջ պաշտպանել Հայաստանի ազգային շահերը:



Հայ Սփիւռքը

ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԱՆՍ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Հայ իրականութեան մէջ սփիւռքը դարձած է կարեւոր ներկայութիւն մը իր որոշակի առաքելութեամբ, որն է հայ քրիստոնեային Հայրենիքի սահմաններէն դուրս հայ պահելը իր եկեղեցիներով, դպրոցներով եւ հաստատութիւններով: Բնական է, որ այս բոլորը կը պահանջեն լուրջ ծրագրաւորում, աշխատանք, ծառայութիւն, նիւթական պարտաւորութիւններ, որոնց արդիւնքը կ'ըլլայ այն, որ նպատակ ու նկարագիր հաղորդած կ'ըլլանք մեր կեանքին՝ ապահովելով կազմակերպեալ ու կայուն սփիւռքի մը ներկայութիւնը:

Հայրենիքէն դուրս ունինք համատարած սփիւռք մը՝ դադութներով տարածուած աշխարհի չորս ծագերուն: Այս պատկերին մէջ ներկայիս կը տեսնենք գաղութներ, որոնք իրենց փառքի օրերը ապրած ըլլալով, ցաւ ի սիրտ, մարած են կամ տակաւ առ տակաւ կը մարին: Այնուամենայնիւ, ընդհանուր պատկերը մեզի կը ներկայանայ յուսադրող երեւոյթներով:

Վերջին հարեւրամեակին հայ սփիւռքը դարձաւ աւելի ընդարձակ: Այսօր աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ ունինք մեծ ու փոքր համայնքներ բոլորն ալ իրենց կազմուածքով եւ նկարագիրով տարբեր մէկզմիւսէն: Կան, սակայն, երկու գերագոյն արժէքներ՝ Մայր Հայրենիքն ու Սբ. Էջմիածինը, որոնք կը միաւորեն մեր ժողովուրդը: Այս երկու սրբութիւնները մեր հոգեւոր մէջ արմատաւորուած՝ ամուր ենք որպէս սփիւռք եւ կը շարունակենք մեր բարի պատերազմը, գոյատեւելու համար որպէս ապրող ու շնչող եկեղեցի ու ազգ:

Այսօրուան սփիւռքը բազմաշերտ է ու բազմազոյն: Հայոց ցեղասպանութենէն յետոյ տեղահանուած հայ գաղթականներուն տարիներ անց եկան միանալու Հայաստանէն, Պարսկաստանէն, Մերձաւոր եւ Միջին Արեւելքէն արտագաղթած հայեր: Առաւել բար տնտեսական եւ քաղաքական պատճառներով արտագաղթը թերեւս ժխտական կարելի է համարել, որովհետեւ արտահոսքը ամէն պարագայի ցաւ կը պատճառէ մեզի: Սակայն պէտք է ըմբռնել նաեւ իրերու վիճակը: Միւս կողմէն, դէպի սփիւռք ներհոսքը արթնութեան նոր ալիք մը բերաւ ուժացող համայնքներէն ներս: Վերաշխուժացան եկեղեցական ու ազգային կառուցները, աւելցան դպրոցները, աշխոյժ կապ հաստատուեցաւ Մայր Հայրենիքին հետ: Չենք անդրադառնար Ռուսաստանի սփիւռքին, որ կը թուի ըլլալ ամենաարագ ձուլուող համայնքը եւ ուր դժուար պիտի ըլլայ պատկերացնել սփիւռքի աւանդական նախատիպին ձեւաւորումը:

Դժուարութիւնները մէկդի դնելով՝ այնուամենայնիւ, սփիւռքը դրական եւ լաւատեսական մօտեցումով պէտք է ընկալել: Որպէս սփիւռք մեր քաղաքացիական պարտաւորութիւնները յարգելով տուեալ երկրի նկատմամբ՝ պարտինք զգօն ըլլալ, որպէսզի չմարի մեր մէջ հայեցի նկարագիրը պահպանելու ձգտումը: Կը հասկնանք, որ այս աշխարհը առհասարակ շարժման մէջ է եւ կարծէք մարդիկ դարձած են աշխարհաքաղաքացի: Այսուհանդերձ, սփիւռքի սրբազան պարտականութիւնն է պահպանել հայ ազգային ոգին, հայ լեզուն, հայ մշակոյթը եւ կրօնը աշխարհի բոլոր կողմերը: Մեր ազգային արժէքները ո'չ թէ պէտք է հակադրել համամարդկային, համընդհանուր արժէքներուն, ըլլան անոնք մշակութային, բարոյական, հոգեւոր, ընկերային, թէ քաղաքացիական, ալ՝ դրականը քաղելով համադրել մեր արժեհամակարգը:

Որպէս Հայ Եկեղեցւոյ սպասուր չորս տասնամեակներու մեր ծառայութիւնը որքան դասեր տուաւ մեզի: Ընդլայնուեցաւ մեր մտահորիզոնը եւ կրօնական, եւ՛ հոգեւոր, եւ՛ թէ մտաւոր իմաստով: Սորվեցանք հեռուն նայիլ եւ լայնախոհ ըլլալ՝ յարգանք տածելով բոլորին հանդէպ՝ անկախ այն բանէն կ'ընդունինք՝ երեւոյթը կամ անձը, թէ՛ ոչ: Բորորը յարգելով է, որ խորապէս հասկցանք մեր ազգային նկարագրին, մշակոյթին եւ ընդհանրապէս՝ արժեհամակարգին աստուածատուր պարգեւ ըլլալը եւ այն պաշտպանելու մեր սրբազան առաքելութիւնը:

Ուրեմն, ամուր պահենք Մայր Հայրենիքի, Սբ. Էջմիածնի ու հայրենաբնակ մեր ժողովուրդի կապ, որպէսզի անսասան մնայ մեր ինքնութիւնը: Կրթենք գալիք սերունդները մեր դաւանած ազնուագոյն արժէքներով, տա՛նք անոնց հնարաւորութիւն բարձրագոյն կրթութեան լաւագոյն համալսարաններէ ներս, որպէսզի անոնք դառնան համաշխարհային առումով լաւագոյն մասնագէտներ բոլոր բնագաւառներէն ներս եւ առակ առաջնորդներ: Միջակութիւնը պարտինք մերժել այլեւս:

Դարեր շարունակ սփիւռքը գոյատեւած է նաեւ քրիստոնէական հաւատքի շնորհիւ, մանաւանդ՝ այլադաւան երկիրներու մէջ: Այսօր ալ, խոր եւ գիտակից քրիստոնէական հաւատքով կարելի է յաղթահարել նորօրեայ մարտահրաւէրները: Մենք համոզուած ենք, որ Հայց. Առաքելական Եկեղեցին կարեւոր դերակատարութիւն ունի սփիւռքի գոյատեւման եւ անոր հայապահպանութեան կարեւոր առաքելութեան մէջ:

Ուրեմն, մշտապէս սեւեռուն պահենք մեր հայեացքը Սբ. Էջմիածնին եւ Մայր Հայաստանին՝ մնալով գիտակից մեր ինքնութեան եւ գերագոյն արժէքներուն:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը իր 99րդ Տարեժողովը կը Գումարէ Լոս Անճելոսի Մէջ



Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 99րդ Տարեժողովը այս տարի տեղի ունեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 20-ին, առաւօտեան ժամը 9:00-ին, Լոս Անճելոսի Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ: Ժողովը ձեռնհասօրէն վարեց Ընկերակցութեան Նախագահ՝ Տօթթ. Նազարէթ Տարագճեան: Վեր. Յարութիւն Սեյիմեան՝ Նախագահը Սուրբոյ Հայ Աւետարանական Համայնքին մատուց աղօթք եւ կարճ խորհրդածութիւն հիմնուած Երեմիա 29. 11 համարին վրայ. «Քանի որ ձեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ.՝ կը պատգամէ Տէրը.՝ անոնք բարօրութեան ծրագիրներ են՝ ո'չ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար»: Վեր. Սեյիմեան անդրադառնալով մարդկային առօրեայ ճնշումներուն եւ ցաւերուն նշեց որ յոյսը կը ձեռքազատէ մեզ յուսախաբուութենէ եւ կու տայ կեանքի ուղղութիւն եւ նպատակ:

Ապա, ժողովի ընթացքին, Ընկերակցութեան Տնօրէնները, ղեկավարները, Յանձնախումբերու Ատենապետները, ինչպէս նաեւ Հայ Աւետարանական Միութիւններու, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի, եւ տարբեր կազմակերպութիւններու պատուիրակները ներկայացուցին իրենց տեղեկագիրները, բաժնեկցեցան իրենց ուրախութիւնները եւ մտահոգութիւնները եւ փառք տուին Աստուծոյ անցնող տարուան իրենց գործունէութիւններուն համար:

Համաժողովի աւարտին, յայտարարուեցան անունները Ընկերակցութեան Վարչական Խորհուրդի նորընտրեալ անդամներուն, որոնք պիտի փոխարինեն իրենց երէք տարուայ շրջանը աւարտած անդամները.՝ Պրայըն Աղպապեան, Պրայըն Պետրոսեան, Վեր. Դոկտ. Աւետիս Պոյնչեան, ճան Զէքէզեան, Իրաւաբան Մարգ Գասապեան, Լուիզ Քիւրքճեան, Դոկտ. Հէտըր Օհէյնսըն, Միշէլ Սիմուրեան եւ Գէն Գէորգեան:

Ընկերակցութեան տարեժողովին համընթաց, տեղի ունեցան նաեւ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի ժողովները, Հինգշաբթի եւ Ուրբաթ՝ Հոկտեմբեր 18-19 օրերուն, ինչպէս նաեւ Աւետարանչական Ընկերակցութեան Վարչական Խորհուրդի նիստը՝ Ուրբաթ երեկոյեան, որու ընթացքին Վարչական Խորհուրդի

անդամները սերտեցին Ընկերակցութեան գործունէութիւնները եւ խորհրդակցեցան ապագայ ծրագիրներու մասին:

Տարեկան Համաժողովի Պաշտամունքը տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբեր 21-ի առաւօտուն, Լոս Անճելոսի Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ: Օրուան պատգամաբերներն էին Վեր. Դոկտ. Փոլ Հայտոյթեան՝ Պէտրոսի Հայկազեան Համալսարանի Նախագահը՝ անգլերէն լեզուով եւ Վեր. Յովհաննէս Յովսէփեան՝ Հովիւր Երեւանի Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի՝ Հայերէն լեզուով: Պաշտամունքի ընթացքին ներկաները վարկեան մը յտնկալս չիշեցին Ընկերակցութեան այն բոլոր անդամները, որոնք անցնող տարեշրջանին աւարտելով իրենց կեանքի այս ընթացքը միացան յաւիտենականութեան: Ապա Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Տնօրէն Վեր. Դոկտ. Վահան Թութիկեան կատարեց Վարչական Խորհուրդի նորընտրեալ անդամներու պաշտօնակոչութեան արարողութիւնը:

Մեր խորհին շնորհակալութիւնը կ'ուզենք յայտնել Լոս Անճելոսի Միացեալ Հայ Աւետարանական Եկեղեցիի հովիւներուն եւ անդամներուն, որոնք Չերմօրէն մեզ ընդունեցին եւ հիւրասիրեցին ժողովներու տեւողութեան: Աղօթող ենք որ Աստուած շարունակէ առատօրէն օրհնել այս Եկեղեցին ու անոր անդամները՝ իր փառքին համար:

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը հիմնադրուած է 1918-ին, որպէս Քրիստոնէական կազմակերպութիւն, իր ծառայութիւնները մատուցանելու բոլոր անոնց որոնք օգնութեան կարիքը ունին՝ առանց խտրութեան: Աւետարանչականը իր այս համաշխարհային առաքելութիւնը կ'իրականացնէ պահպանելով շարք մը կրթական, աւետարանչական եւ բարեսիրական ծառայութիւններ հայրենիքի եւ արտերկրի քսաներեք տարբեր երկիրներու մէջ:

Լրացուցիչ տեղեկութիւններու համար կրնաք այցելել Աւետարանչականի կայքէջը www.amaa.org, կամ կապ հաստատել Աւետարանչականի Կեդրոնին հետ - 31 West Century Road, Paramus, NJ 07652, հեռ.՝ 201.265.2607, Ե-նամակ.՝ info@amaa.org.

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը Փառաշուք Միջոցառումներով Նշեց Իր 40-րդ Տարեդարձը



Իսկապէս բացառիկ երեւոյթ մըն էր մեր երգչախումբերու պատմութեան մէջ նշել տարեդարձ մը, այսպիսի շքեղ կրօնական եւ աշխարհիկ հանդիսութիւններով: Արդարեւ, Կիրակի 18 Նոյեմբեր, 2018 պատմական օր մըն էր Լոս Անճելոսի Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբին հա-

Տէր Նարեկ եւ Տէր Խաժակ Քահանայ հայերուն: Առաջնորդ Յովնան Արք. Տէր-տէրեանի կողքին հիւրաբար ներկայ էն Արցախի Հանրապետութեան նախագահ Տիար Բակօ Սահակեան, Արցախի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի աւագ հիւպատոս Ար-



մար: Անցեալ շաբաթ բացառիկ համերգով մը ներկայանալէ ետք, այս Կիրակի հանդիսաւոր եւ հոգեպարար արարողութեամբ կը նշէր իր հիմնադրութեան 40րդ տարեդարձը: Այդ օր Պըրպէնքի Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարը լեւի լեցուն էր հաւատացեալներով: Միջնորդը խիստ տօնական էր: Օրուան պատարագիչն էր յատկապէս Հայաստանէն ժամանած Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Չուլճեան, աւընթերակալութեամբ

մէն Բայբուրդեան, Հայաստան համահայկական Հիմնադրամի տնօրէն Հայկակ Արշամեան, նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Ս. էջմիածնի լուսարարապետ Գերշ. Յովնան Եպս. Յակոբեան, թեմական Խորհուրդի ատենապետ Ժողէֆ Կանիմեան եւ այլ հիւրեր: Ս. Պատարագը կատարուեցաւ կոմիտասեան բազմաձայն երգեցողութեամբ, ղեկավարութեամբ Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Հոգեպարար արարողութեան կիսուն թե-

«Պատիւս Արժանաւորաց» Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի Հիմնադրութեան 40-ամեակին Առիթով

Սփիւռքահայ մեր տարաբնակ ժողովուրդի գոյութեան եւ ինքնութեան պահպանումին համար առաջնահերթութիւն եղած է եկեղեցւոյ, դպրոցի եւ մամուլի կողքին՝ կառչած մնալ նաեւ մեր մշակութային արժէքներուն: Վերոյիշեալներու մէկ անբաժան մասնիկն է նաեւ Հայ երգն ու երաժշտութիւնը, որուն ռահվիրաներէն եղաւ Հովիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ հիմնուած «Խաչատուրեան Դպրաց Դաս» երգչախումբը: Արդարեւ, պոլսահայ խումբ մը նուիրեալ երաժշտասէրներ, ի մի համախմբուելով, հիմը դրած էին նոր միաւորի մը, զայն անուանելով Թուրքիոյ երջանկայիշատակ Հայոց պատրիարք Ամենապատիւ Գարեգին արք. Խաչատուրեանի անունով «Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբ»:

Կարճ ժամանակ անց վերոյիշեալ երգչախումբը լայն գործունէութիւն ծաւալեց, յատկապէս Լոս Անճելոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ ծուխին մէջ: Շնորհալի խմբավար Ստեփան Կեօզիւմեանի անմիջական, աջալուրջ եւ հետեւողական աշխատանքներուն շնորհիւ, Խաչատուրեան դպրաց դաս երգչախումբը հետզհետէ նոր տարագ ու երանգ ստացաւ: Ան՝ պարզ երգչախմբային հարթակէն վեր բարձրանալով, համայնքին մէջ հանրաճանաչ դարձաւ Կոմիտասեան բազմաձայն եւ բարձրորակ պատարագի երգեցողութեամբ: Ուշագրաւ էին նաեւ երգչախումբի առանձին համերգներն ու հրապարակային այլ ելոյթները տարբեր քաղաքներու մէջ եւս: Անոնք՝ իրենց հոգեւոր եւ ազգային երգերու բազմաբնոյթ յայտագիրներով, ամենուրեք արժանացան երժշտասէր հասարակութեան անվերապահ գնահատանքին: Ներկայիս, Խաչատուրեան Դպրաց դաս երգչախումբը տեղափոխուած ըլլալով Ս. Ղեւոնդ առաջնորդանիստ Մայր Տաճար, իր սիրայօժար մասնակցութիւնը կը բերէ Ս. Պատարագի երգեցողութիւններուն, մեծ փայլք մը տալով հոգեպարար արարողութիւններուն եւ այլ հանդիսութիւններուն:

Սիրելի խմբավար վաստակաշատ Ստեփան Կեօզիւմեան եւ երգչախումբի շնորհալի անդամներ, չախագանց գնահատելի եւ շնորհաւորելի էք, որ Ձեր աջալուրջ աշխատանքով ու անսակարկ նուիրումով, 40 տարիներ շարունակ, հանրութեան հրամցուցած էք մեր հոգեզմայլ երգերն ու շարականները, հոգեկան մեծ ցնծութիւն պարգեւելով Ձեր ունկնդիրներուն:

Այս բարեբաստիկ առիթով՝ մեր ջերմագին շնորհաւորութիւնները ձեզի, մաղթելով որ նոյն եռանդով ու ոգիով շարունակէք Ձեր եկեղեցւանուէր ու մշակութանուէր վսեմ առաքելութիւնը:

ԳԱՐԻԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ

միս բարեջան առաջնորդ Յովնան Սրբազան խօսք առնելով բնութագրեց օրուան նպատակը եւ սրտագին խօսքերով ողջունեց ներկայ հիւր անձնաւորութիւնները, որոնք արժանացան որոտընդոստ ծափերու: Այնուհետեւ պատարագիչ Սեպուհ Արք. Չուլճեան իր հոգեյոյզ քարոզին մէջ անդրադարձաւ մասնաւորաբար աղօթքի կարեւորութեան շուրջ եւ յորդորեց ունենալ սէր հանդէպ Աստուծոյ, ընտանիքին, եկեղեցիին ու հայրենիքին: Արդարեւ զոյգ սրբազաններն ալ կոչ ուղղեցին քաջալերել Հայաստան Հիմնադրամի յառաջիկայ թելեթոնը եւ իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին իր 40 ամեակը նշող Խաչատուրեան Դպրոց Դաս երգչախումբին: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն ի չիշատակ Արցախի Նահատակ քաջամարտիկներուն եւ Խաչատուրեան Դպրոց Դաս երգչախումբի անդարձ մեկնած յաւերժի ճամբորդներուն: Օրուան մէկ մասը սիրոյ սեղան ընդունելութիւնն էր, եկեղեցւոյ կից Գալաթեան սրահին մէջ: Գեղեցկօրէն զարդարուած ճաշասեղաններուն շուրջ իրենց մասնակցութիւնը բերած էին աւելի քան 300 հրաւիրեալներ: Յակոբ Սրկ. Մերունեանի ձեռնհաս հանդիսավարութեամբ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտարար մը: Այս առթիւ ներկայներուն բաժնուեցաւ 40 ամեակին նուիրուած գունաւոր եւ պատկե-

Շար.ը էջ 17

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY



M MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

Հ.Բ.Ը.Մ.ի «Ստախօսը» Կատակերգութեան Յաջող Ներկայացումը



Անցնող երկու շաբաթներուն Հարաւային Գալիֆոնիոյ Հ.Բ.Ը.Մ.ի «Ստախօսան» թատերախումբը (նախապէս «Արտաւազը» մեծ յաջողութեամբ ներկայացուց Գարլօ Կոլտոնի, նոր բեմադրութեամբ պատրաստուած «Ստախօսը» կատակերգութիւնը:

Թատերախումբի հիմնադրութեան 40րդ տարեդարձին զուգարդիպող սոյն միջոցառումը կայացաւ Փաստինայի Հ.Բ.Ը.Մ.ի Վաչէ եւ Թամար Մանուկեան կատարողական Արուեստից արդիական նոր կեդրոնին մէջ, բեմադրութեամբ վաստակաշատ տաղանդաւոր դերասան-բեմադրիչ Գրիգոր Ստախօսանի:

Արդարեւ յաջորդաբար չորս ներկայացումներու ընթացքին, աւելի քան երկու հազար թատերասերներ, ներկայ եղան 18րդ դարու իտալացի նշանաւոր թատերագիր Գարլօ Կոլտոնի «Ստախօսը» («էլ Պիկարտո») կատակերգութեան:

225 տարուան հնութիւն ունեցող սոյն թատերախումբը, իր բնութիւնով ու բովանդակութեամբ, չէ կորսնցուցած իր այժմէականութիւնը, քանի որ մարդկային նկարագրի որոշ յատկութիւնները՝ դարերէ ի վեր, մնացած են իրենց նոյն հոլովոյթին մէջ:

Խաղարկութեան նիւթն առնուած էր 18րդ դարուն Վենետիկի մէջ տեղի ունեցած առօրեայ ընկերային հակադարձ իրադարձութիւններէն: Թեմայի գլխաւոր առանցքն անշուշտ սուտն էր, որ մարդկային փոխ-յարաբերութիւններու ծիրէն ներս ակներեւ կը դառնայ, նկարագրային խայտաբղէտ դրսերու ունենումով, որով դուռ կը բացուի ծայրայեղ եւ այլազան շփոթութեանց: Այս բոլորը ի մի ազուցանելով հանդիսատեսի մօտ կը ստեղծուի հետաքրքրական եւ ծիծաղաշարժ երեւոյթներ:

Բիեսի մեծագոյն ստախօսն էր՝ Լէլիօն (Արամ Մուրատեան)՝ որուն համարձակ եւ ճկուն խաղարկութիւնը խաբկանքներն ու նիւթուած հնարամտութիւնները՝ խոհեմ լարողացի մը տպաւորութիւնը ձգեցին: Յաջող դերակատարութիւն մը արդարեւ: Ուշագրաւ եւ դիպուկ խաղարկութիւն մը վերապահուած էր Արլեքին (Փթըր Նշան): Ան իր խորամանկ, արագաշարժ ու թեթեւաբարոյ շարժումներով կը ցուցաբերէր մարմնաւորել իր կերպարը, արժանանալով ներկայներու հմայքին...:

Տպաւորիչ եւ արհեստավարժ խաղարկութիւններ ունեցան Ֆլօրինսօն (Փիթըր Տէր Պետրոսեան),

Պարգեւատրումը կատարուեցաւ Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Ֆէյսալ Միքտատի ձեռամբ: Պարգեւատրումէ առաջ փոխնախարար Ֆէյսալ Միքտատեանը գնահատեց Դեսպան Փոլատեանի անձն ու գործունէութիւնը, հաջ ժողովուրդի հաւատարմութիւնը, հայ-սուրիական յարաբերութեան մէջ անոր դերակատարութիւնը, յատկապէս Սուրիոյ պատերազմի ընթացքին ու մասնաւոր Հայաստանի Հանրապետութեան ցուցաբերած զօրակցութիւնը Սուրիոյ ճգնաժամի օրերուն: Փոխնախարար Միքտատեանը ըսելով, որ հայ ժողովուրդը թուրք իշխանութիւններու կողմէ 100

տարիներ առաջ ենթարկուած էր ցեղասպանութեան եւ տեղահանութեան, նոյն թշնամիի կողմէ այսօր Սուրիան եւս կ'ենթարկուի նոյն վայրագութեան:

Այնուհետեւ դեսպան Փոլատեան, իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Պաշչար ալ-Ասատին, Արտգործ նախարարութեան եւ պետական այրերուն, իրենց ցուցաբերած վստահութեան եւ Սուրիոյ Հանրապետութեան առաջին աստիճանի արժանեաց շքանշանով պարգեւատրուելուն համար:

Նշենք, որ դոկտ. փրոֆ. Արշակ Փոլատեան յուզմունքով եւ հպարտանքի զգացումներով միախառն պահեր ապրեցաւ:

Նշենք, որ պարգեւատրման հանդիսութեան ներկայ էին Սուրիոյ արտգործ նախարարութեան բարձրաստիճան անձնաւորութիւններ, Հալէպի մէջ ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան եւ Դամասկոսի մէջ ՀՀ դեսպանատան աշխատակազմը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

Մաքրուհի Թաթուլեան-Խաչատուրեանի «Կեանքիս Առաքելութիւնը Ծիածանի Գոյներով» Հատորը

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Արժանաւոր պիտի խորագրեմ այս հատորը, որուն նիւթը Տիկ. Խաչատուրեան նուիրեալի կեանքը կը ներկայացնէ: Նուիրեալ մը հայ դպրոցին ամբողջ 43 տարի, Պէյրութի Հաճըն թաղա մասի Սահակ-Մեսրոպեան եւ Ռուբինեան նախակրթարանին մէջ որպէս ուսուցչուհի եւ ապա, իր ասպարէզի վերջին հինգ տարի ներսուն, որպէս Ռուբինեան վարժարանի տնօրէնուհի: 280 էջէ բոլորակ տարածուող այս գիրքը էթէ էջ առ էջ ներկայացնեմ, գիրք մը գրած պիտի ըլլամ: Կենսագրական մը նոյնքան էջէ բով: Գրելիքս ակնարկ մըն է «Կտոր մը երկիրքի» մասին: Այս խորագիրը կը կրէ Դոկտ. Անդրանիկ Տազսեանի հակիրճ խօսքը այս հատորին 13-րդ էջին վրայ, ուր գրուած է խօսքը Լիբանանի հայ կրթօճախի երկնակամարին մասին է - Թ.Թ.): «Այս երկնակամարին մէկ կտորին մնացուն մտեցիչ ու մատակարարն է Տիկ. Մաքրուհի Թաթուլեան-Խաչատուրեանը:

Ինչու չարձանագրենք այստեղ, որ Մաքրուհի Խաչատուրեանը որպէս կին գործիչ նուիրուած է ոչ միայն հայ դպրոցին, այլ նաեւ Ս.Գ.Հնչակեան Կուսակցութեան, որուն մէկ անդամը եղած է, կանուխէն վարելով պատասխանատու պաշտօններ եւ նոյնիսկ իր տան մէջ մասնակիցը եղած է կուսակցութեան մէկ մասնաճիւղի հիմնադրման, գոր կոչած են Մարօ Նազարբէկեան:

Ակնարկ մըն ալ նետելով Մաքրուհի Խաչատուրեանի կենսագրութեան, ջանանք ներկայացնել հատորին բովանդակութիւնը:

Մաքրուհին ծնած է Պէյրութ, 1925-ին: Նախակրթութիւն՝ Սահակեան վարժարան, երկրորդական ուսում՝ Հ.Բ.Ը. Միութեան Դարուհի Յակոբեան աղջկանց վարժարան, ուր շոգեպիւնդ արագութեամբ կը տիրապետէ իր մայրենի լեզուին, փաստ՝ իր ստորագրած բազմաթիւ յօդուածները լիբանանահայ մամուլի էջերէն: Այս կապակցութեամբ շնորհաւորելի գործ մը կատարած է Դոկտ. Անդրանիկ Տազսեանը, ի մի բերելով այս հատորին մէջ երեւցած յօդուածները Մաքրուհի Խաչատուրեանին:

Մաքրուհին, նուիրեալ ուսուցչուհի, չբաւարարուելով երկրորդական ուսումով, 1968-1970 տարիներուն հետեւած է Հայկազեան ամալարանի ուսուցչանոցի ծրագիրին եւ ստացած է ուսուցչական վկայական:

Այս երկասիրութիւնը Երեւանի մէջ ստացաւ 17 Հոկտեմբեր 2018-ին, հեղինակին մակագրութեամբ, Տիկ. Մարալին, որ դուստրն է հեղինակին:

Գիրքին առաջին էջին ընթերցողին կը ժպտին գոյգ անուններ՝ ժագ եւ Մարալ Սեմերճեան, ուր գրուած է. «Կեանքիս Առաքելութիւնը Ծիածանի Գոյներով» հատորին հրատարակութեան որպէս մեկենաս, որդիական սիրով կը շնորհաւորեմ մայրս ամենաբարի: Առ այդ իրեն կը նուիրենք Աւետիս Ահարոնեանի գեղեցիկ տողերը.

«Աշխարհը չգիտէ թէ ինչ երկաթէ կամք, ինչ անձնուրաց արիւթիւն եւ որչափ առաքիւնութիւն կայ այդ հեզ ու բարի աչքերով, ամօթխած

ու արդար էակին մէջ, որ կոչուած է հայ կին, հայ մայր»:

Հեղինակը այս գիրքը նուիրած է իր թագուհի ու Մարի քոյրերուն, որոնք ննջեցեալ եղած են 21 եւ 14 տարեկանին:

Գիրքը ունի նախաբան, ուր հեղինակը կը գրէ. «Շնորհակալութիւն բոլոր ուսուցիչներուս, իրենց մէջ առած ամբողջական դաստիարակութեան համար: Այս բոլորը զիս ներգրաւած են կուսակցական, ընկերային, ուսուցչական եւ միութենական կեանքի շրջագիծէն ներս»:

Կայ նախաբան մըն ալ Խրիմեան հայրիկէն. «Աստուած երկու աչք տուած է մեզի, որպէսզի մէկով լանք, միւսով խնդանք»:

Հեղինակը ունի նաեւ խօսք՝ ուղղուած սիրելի ընթերցողին, ուր կ'ըսէ. «Յաւակնութիւն չունիմ եղակի հատորի մը հրատարակութեան: Գիրքս պարզապէս պատկերն է իմ ազատ ժամերուս կատարած գրական սիրողական աշխատանքիս, որ զիս հեռու պահէ օրուան տաղտուկէն ու կենսաւորած է հոգիս հաճելիով եւ օգտակարով»:

Տեղին պարզ ու անկեղծ հաստատում: Հատորին մէջ այս բոլորէն յետոյ կը յաջորդեն անոր մաքուր հայերէնով պերճափայլ յօդուածները մերթ քննական ուղեւորչերով:

Ահա՛ «Երկխօսութիւն Չապէլ Եսայեանի հետ գրութիւնը», ուր կը կարդանք.

«Սիրելի Չապէլ, ամէն անգամ որ կը նայիմ նկարիդ, նայուածքիդ մէջ կը տեսնեմ ողբը Ատանայի, ողբը 1909-ի երեսուն հազար նահատակներուն եւ աւերած մեր մշակութային հարստութեանց: Ատանայի ողբերգութեան նիւթին նուիրուած «Աւերակներու Մէջ» հատորը կ'եզրակացնես հետեւեալ յուսադրիչ տողերով. իմ կոխկուտած ու արիւնոտած ցեղիս ձայնը կ'երգէր երակներուս մէջ, թէ անմահ եւ անկոտորելի բան մը, ցեղիս հանճարը խուսափած էր ոճրագործներու կապարներէն, խարոյկներէն»:

Կը հետեւի սիրալիր խօսք Սիլվա Կապուտիկեանի մասին: Ապա կու գայ քննականութիւնը Շահան Շահնուրի «Նահանջը Առանց Երգի» գիրքի հերոսուհի Նէնէթին:

Մեծերու տողանցք մըն է կարծէք, ուր, միջանկեալ իր ուսուցչական ասպարէզին, մանկավարժական դաս կայ, ուր մեղանշող աշակերտին յամառութիւնը արիւնքով, ներողութիւն խնդրելով կը վերջանայ:

Ապա հանդէս կու գայ Նարդոսի «Սպաննուած Աղանի» վիպակը գրագէտի քննարկումով: Էպիկուրէն օրինակներ կը բերուին, ուր կը յայտնուի Մաքրուհիին անպարագիծ հետաքրքրութիւնը ոչ միայն հայ, այլ նաեւ միջազգային գրականութեան նկատմամբ:

Շիրվանզանդէն, որ Հնչակեան էր, կու գայ ասպարէզ իր վէպով ու թատրերգութիւններով, ուր հեղինակը կը նկարագրէ. «Շիրվանզանդէի եւ իրեն հասակակից Մուրացանի վէպերով մենք կը ծանօթանանք 19-րդ դարու 80-ականներու թիֆլիսի եւ Պաքուի, Շամախիի եւ այլ գիւղաքաղաքներու, մէկ խօսքով՝ արեւելահայ կեանքի ընկերային, ընտանեկան, քաղաքական, յարաբերական, դասակարգային եւ հատուածական

ընթացումներուն, ներհակ հարազատ պատկերացումներուն՝ նոր ոճով եւ նոր միջոցներով»:

Հեղինակը որպէս լաւ իմաստով՝ կատաղի ընթերցող, գիրք չկայ որ կարդացած չըլլայ: Հեղինակ չկայ այդ շրջանէն որուն գործերուն ծանօթացած չըլլայ:

Ահա Մկրտիչ Արմէնի «Հեղնար Աղբիւր»ը, գոր հայ ընթերցողը ամէնուրեք ծափողջոյնով ընդունեց: Երբ ուսանող էի Սոֆիայի մէջ, Մկրտիչ Արմէնի այս հիանալի գործը թարգմանուեցաւ ու տպուեցաւ թրքերէնով:

Երանի Մաքրուհին նոյն հեղինակէն ներկայացնէր «Պատուիրեցին յանձնել ձեզ» երկը, որ սիպիւրեան աքսորեալներու անմարդկային կեանքը կը ներկայացնէր: Բայց հոս. «Դուրս հանէ էրէխոցը կ'ըսեն ինձի, տունդ քարու քանդ պիտի լինի, Ուստա Մկրտիչ: Է, ես որին դուրս հանեմ, ժամանակը թէ մնացեր: Տես, ես էլ դուրս հանեցի իմ անմեղ, ամէնէն սիրած հիւանդ վիրաւոր էրէխէս»:

Ահաւոր պատկեր: Հերթը Համաստեղի «Աղաւնիները» եւ «Մարտիկը» հիանալի հեքիաթներուն եկած է: Երանի՛ «Կապոյտ Ուլունք», նոյնպէս հեղինակէն, ներկայացուէր:

«1900-ին, արդէն արեւմտահայ գրականութիւնը ունէր իր գիւղագիր վարպետները, որոնք մեր ժողովուրդի բարբերէն որոշ մաս մը, մեր հոգիին բնորոշ գիծերը, մեր գգայնութեանց քանի մը երեսները, մեր գաւառի բարբառին նմոյշները, մեր դարաւոր իմաստութիւնը տուին վայելուչ եւ բիւրեղացած լեզուով»:

Նոյն վայելչութիւնը կը բերէ մեզի հեղինակը՝ իր գերագոյն սիրով դէպի մեր գրականութիւնը: Փոքրերը տեղ չունին հեղինակին գործերուն մէջ: Ահա կարգը Երուխանի «Ծովափի Աղջիկը» նովէլին հասած է: «Երբ իրենց մայրերը իմացան եղելութիւնը՝ ուրախացան, եւ գիշեր մըն ալ երկու դրացիները՝ բարեկամներու ներկայութեան, պաշտօնական հանգամանքով վաւերացուցին անոնց սէրը»:

Առանց աղմուկի, քաղաքավարօքն անշուշտ, հեղինակը միշտ մեծերու հետ. «Եթէ ասպրէլինք ամբողջական հայրենիքի մէջ, ամուր պետականութեամբ, վստահաբար մեր հարուստ մշակոյթով ու խելացի քաղաքականութեամբ պիտի կանգնէինք այսօր աշխարհի մեծ պետութիւններու շարքին»:

Հե՞րթ: Ռաֆֆիի «Սամուէլ» պատմավէպը: Հեղինակը Ռաֆֆի գրած է. Ռաֆֆին ինք իր անունը «Ր»-ով կը գրէր, յարգենք մեր մեծագոյն պատմավէպին գիրը եւ «Ր»-ով գրենք իր անունը, որ արեւելահայ լեզուն ամրագրեց իր գործով:



Հեղինակին խօսքը. «Մեծ եղաւ Չարենց իր բազմալար քնարով, կիրքէն հօր թափով, գրական համանուագով եւ իր բանաստեղծական տոկուն, մնացուն վաստակով, որով ան հայ գրականութեան դարաւոր գանձարանէն կտակեց հարուստ ժառանգութիւն: Խորք ունին իր երգերը, ուր ան ոչ միայն անցեալը կ'երգէ, այլեւ կը տեսնէ՛ գալիքը պայծառ»:

Մէջբերումներով հարստացած խօսք, ուր կը յիշուին նաեւ անունները Յովհաննէս Շիրազի, Համօ Սահեանի, Գէորգ Էմի նի, Սիլվա Կապուտիկեանի, Պարոյր Սեւակի, որոնք հետեւե ցան Չարենցի բացած ուղեւային ճամբուն:

Կարգը վահճամ Մովեանին է, որ աշխատակցած է բազում հայաբարբառ թերթերու: Հեղինակը չի շատ օրաթերթի, շաբաթաթերթի, ամսագրի անուններն ու հրատարակած վայրերը՝ Փարիզ, Լոնտոն, Թեհրան, Երեւան, Պէյրութ, Ամերիկա... Ես երբ վերջնորէն կու գայի Հայաստան 2015-ի կէսին, գացի մնաք բարով ըսելու ուսուցիչիս՝ Սիմոն Սիմոնեանի եւ վահճամ Մովեանի, որոնց դամբարանները Պէյրութի հայոց գերեզմանատան մէջ են, Սիմոնեանի մասին մենագրութիւն, իսկ Մովեանի գիրքէն բարձրաձայն ըսած պահուս խումբ մը ունկնդիր ներգարմացած զիս կ'ունկնդրէին:

Ինչէր, ինչէր գրած է տակաւին սիրելի Մաքրուհին, որ 1958-ին ամուսնութիւն կնքեց մօտիկ ընկերօ՛՛ Հայկազ Խաչատուրեանին հետ: «Նմանն զնմանը գտանէ»:

Հայ գիրքի պաշտող մը, որ նաւաստի ըլլալուն նախապէս Սպանիոյ ներքին պատերազմին աջակցութեան գինեակներուն զէնք հասցուցած է: Ամերիկեան հանդիպումները նուազ հետաքրքրական չեն, ուր կը հանդի պիւնք բազում անուններու:

Նուիրեալի պոռթկումն է ի Հայաստան. «Հայ ուսուցիչը ազգայնացանումի պատնէշին վրայ» ութ էջերու մէջ եւ Պէյրութի մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.-ի 2011 տարին «Հայ Գիրքի Տարի» հռչակելը:

Վերլուծական էջերու շարք. նիւթ՝ հայ դպրոցներու մայրենի լեզուն, մանկավարժական խորթութեանցութեամբ ու սիրով, միշտ սէրով: Բազում ճառեր նաեւ ուղղուած ամեակներու հայ դպրոցներու, միութիւններու: «Իմ հասարակական, կրթական եւ ընկերային 60 տարիներու տարածուած աշխատանքովս երախտապարտ եմ բոլոր ուսուցիչներուն»:

Հոս ունի պատուոյ գիր, տիպլոմ եւ շքանշան: Յետոյ, ջեր մօրէն

Առաքելութեան Լծուած...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ժամադրութեան ժամից բոլորներն էր անցել, հագուողէս էմ ուշանում ժամադրութիւնից, երբ Համոյնց դռան գանգը սեղմեցի, յետ միջօրէի չորսից անց էր, արեւն էլ թեքուած դէպի արեւմտեան կողմը, նա ոչ թէ՛ ջրմուկի էր արձակուած: Դեռ չբացուած դռան մօտ կանգնած շուրջս էմ դիտում, Գլէնոքս պողոտայի դէպի արեւելք ընթացող նախքան վերջաւորութիւն, երկու կողմերը առանձնատներ ծառու ծաղիկով, հանգստաւէտ ու խաղաղ միջավայր: Դուռը բացուեց, Համօն էր, խօսքս նրան ուղղելով.

- Համօ, հոյակապ տեղ ես ապրում քո այս գեղեցիկ շէնքով, այս համեմատաբար բարձունքում:

Նա անակնկալի եկած միայն մեղմ ժպտաց, ես վերագրեցի այդ որպէս համեմատութեան նշան, արդարեւ համեմատութիւնը հոգեկան դրսեւորում, բնատրուութեան եւ խառնուածքի թանկագին գարդ է, որից մարդ չի տուժելու, այլ առաւել կ'արժեւորուի եւ կը բարձրանայ:

Համոյի հետ ծանօթութիւնս սկսուել է իր կազմակերպած բաւական յաջող նկարչական ցուցահանդէսից: Նա տարեց մէկն է, ուշ տարիքում է սկսել նկարել, բայց փոքրուց սէր է ունեցել անթեղուած: Նա թէ՛ նկարում եւ թէ՛ սովորում է, հետաքրքիր աշխատասէր եւ հետեւողական մարդ, աննկուն կամք որոշածի նկատմամբ, դեռ այդ տարիքում ունակ սովորելու եւ ստեղծագործելու: Նա 40 նկարներով ցուցահանդէս էր կազմակերպել սրահի չորս պատերը բազմերանգ ու բազմաբնոյթ իւրանկարներով գարդարել: Նա գոհունակութեամբ ասում էր.

- Իմ տարիքս յայտնող նկարներ եմ նկարել, սրահի փոքրութեան պատճառով յիտուն կտաւ- նկարներս գտնուում են պահեստանոցում:

Նա կեանքի վերջին տասը տարիներումն է նկարել, նրանից առաջ իր կարեւոր սեփական գործն է ունեցել մեծ թուով գործաւորներ աշխատացնելով: Նա պատանի տարիքից արհեստի է հետեւում եւ հետեւողական աշխատանքով ու ճիշտ ծրագրաւորումներով գործը բարգաւաճում եւ ընդարձակում է շէնքերի օդափոխութեան կապուղ սարքաւորումներ արդիւնաբերելով, որի շնորհիւ ճանաչողութիւն է վաստակում Իրանի արդիւնաբերութեան բնագաւառում որպէս փնտրող ճարտարութեան գործարար:

Համոյի տանը գտնուելուս երկրորդ անգամն է իմ գրքի՝ «Մարդու առաքելութեան ճառագումը», շապիկի նկարի հարցով: Նրա կինը՝ տիկ. Յամիկն յարգալից եւ ժպտուն երես ինձ ընդունում է, տեղ էմ գրաւում սեղանի շուրջը: Թէլում ենք եւ տիկ. Յամիկի տնային թխուածքը վաչելում, գրոցի ընթացքում հետեւութիւն է արւում՝ «Արեւավառ իմ երկիր» գրքում սպուած «Բախտաւոր մարդու» պատմութեան շուրջ: Մարդը, որը ճամբի տեսուչ-ոստիկանի կողմից ստուգման եւ հետապնդման ենթարկուելով կտակուած շօշափելի գումարի է հասնում: Առ այդ Տիկ. Յամիկը կեանքի իրողութեան մի դրուագ է յիշում, նա իր յիշողութեան ճշմարտիացութիւնը հաստատելու համար դիմում է ամուսնուն.

- Յիշում ես Համօն մեր բարեկամ Մեյլիքին, երբ մի քանի ամիս գտնուում էինք Անգլիայի Քամբրիջ քաղաքում, նա յաճախ մեզ էր

այցելում եւ աշխատում էր այդ անծանօթ քաղաքում մեզ օգտակար լինել:

Նա անթարթ աչքերով նայեց կնոջ կողմը ամփոփուած վիճակում.

- Ո՞ր Մեյլիքը:

- Էն Մեյլիքը, որ Քամբրիջում ուսանող էր, ուշիմ ու աշխատասէր Մեյլիքը:

- Յովսէփի եւ Գոլիանումի տղան:

- Հա, դեհ, դրան եմ ասում:

- Լա՛ւ, ասա՛, ինչ ես յիշում:

- Նա եկել էր մեզ այցելութեան եւ պատմեց իրեն պատահած դէպքը, թէ ինչպէս ոստիկանը իրեն տուգանել էր:

Անտեղեակ եղելութիւնից սուս ու փուս իրենց խօսակցութեան եմ հետեւում, Համօն ցանկացաւ տուգանուելու պատմութիւնը իմանալ, ուստի նորէն հարց ուղղեց.

- Ի՞նչ պատճառով է նա տուգանուած:

- Փոլիսը տուգանել էր խախտումի համար եւ մեղսագիր (ticket) յանձնել վճարելու:

- Այ կնի՛կ, կը ներես, որ լաւ չեմ յիշում, նա ի՞նչ տեսակ խախտումի համար էր տուգանել:

Հետաքրքրութեամբ հետեւում եմ նրանց հարց ու պատասխաններին սպասելով աւարտին:

- Նա գիշերով հեծանիւ էր քշել առանց լուսաւորող ճրագների, փոլիսը կանգնեցրել էր մեղսագիր յանձնել եւ պատուիրել էր հեծանիւը անպայման լոյսերով օժտի, ապա քայլելով առաջնորդի հեծանիւը առանց քշելու, քանի որ կարող է անախորժ դէպք պատահի: Սակայն ոստիկանը դրանով չէր բաւարարուել, գաղտնի հետեւել էր Մեյլիքին տեսնի իր պատուէրը կատարում է նա, թէ՛ ոչ: Մեյլիքը բոլորովին անտեղեակ փոլիսի մտադրութիւնից հնազանդօրէն կատարում է նրա կարգադրութիւնը: Մի քանի օր դէպքից յետոյ Մեյլիքը նամակ է ստանում փոլիսից, թէ. «Յարգելի պրն. Մեյլիք վարդանեան, քանի որ իմ պատուէրս գիտակցօրէն կատարեցիր՝ ներում ես մեղսագիրը վճարելուց»:

Կարծես հոյակապ պատկերի առաջ հոգով վերանում ես, այդպիսի հոգեվիճակ պարուրեց ինձ ասելով.

- Ահաւասիկ յիշուի ճամբի տեսուչ իր առաքելութեան լծուած քաղաքացիների անվտանգութեան ու բարօրութեան համար սրտցաւօրէն ու արդարադատօրէն մտածող, որքան շատ այսպիսի ոստիկանների գոյութիւնը, այնքան աւելի կեանքի առողջ լինելը՝ խաղաղ, անփորձանք, մարդը մարդու նկատմամբ յարգանքով:

Ձրոյցը այստեղ վերջ չգտաւ, այլ գնաց դէպի Հայաստան որոշ ոստիկանների արարքներից անարդար դէպքեր ու արարքներ յիշելով, այս վերջերս ինչպէս լսում եւ պատմում են՝ նրանց գործունէութիւնը դէպի լաւն է գնում: Նկատի պիտի առնենք, որ ոստիկանը հասարակութեան մէջ դաստիարակի եւ ուղղիչ դեր է կատարում, նա քաղաքացիների անվտանգութեան պաշտպանն է:

Երբ արդարութիւնը, սրտցաւութիւնը դերակատար լինեն ժողովրդի, երկրի եւ հայրենիքի, մեր ազգային արժէքների նկատմամբ, վստահօրէն երկիրը կ'առաջադիմի, արտագաղթը կանգ կ' առնի եւ հայրենադարձ կը սկսի, թող որ այդ յոյսերով ապրենք այդ օրերի գալուտեան, բայց ոչ ձեռնածալ, այլ համատարած կառուցողական աշխատասիրութիւն եւ ձգտում մեր իրեակների իրականացման ճամբին:

Սիրելի Ծնողներու Դետ Ծանօթանալու Ժամանակն Է.

Պարզաբանումներ եւ Խորհուրդներ Հոգեբաններէն

Ձրոյցը կեանքին մէջ առանձնաշատուկ արարողութիւն մըն է մէկը միւսի ծնողներուն հետ ծանօթութիւնը: Յաճախ այս թեման պատճառ կը դառնայ երկար վէճերու եւ փոխադարձ անհամաձայնութիւններու: Սովորաբար աղջիկները կը ձգտին յարաբերութիւններու արագ օրինականացման, իսկ տղաները որքան հնարաւոր է կը խուսափին անկէ: Յարաբերութիւններուն որոշ չափով օրինական բնոյթ կարելի է հաղորդել ծնողներու հետ պաշտօնապէս ծանօթանալով, կարելի է ըսել անոնցմէ հանդիպելու արտօնութիւն խնդրելէն ետք: Ընդէն է, այժմ ծանօթանալով ո՛չ թէ արտօնութիւն կը խնդրեն, այլ պարզապէս կը տեղեկացնեն, որ կը հանդիպին, սակայն այդ «պաշտօնական» արարողութիւնը ինքնին արտօնութիւն, օրհնանք ստանալու պէս բան մըն է:

Թէ ինչո՞ւ տղաք կը վախնան աղջկայ ծնողներու հետ ծանօթութեան, հոգեբանները կը պարզաբանեն. «Նախ պէտք է հասկնալ, որ արդեօք տղան ունի՞ այդ ցանկութիւնը, պատրաստ է ան աւելի լուրջ յարաբերութիւններու փուլ մտնելու: Դժուար է ատիկա վախ անուանել, երբ պարզապէս տղան կը կարծէ, թէ պահէ չէ հասունացած տակաւին: Երկրորդ հերթին՝ անոնք կը գիտակցին, որ ծանօթութիւնը նոյնն է, թէ հարցաքննութիւնը, պարզաբանումները իր անձին շուրջ: Յատկապէս այն պարագաներուն, երբ աղջկան ծնողները խիստ են, տղայի լարումը կը հասնի վերջնակէտի, եւ ան ատկէ խուսափելու համար որքան հնարաւոր է կը յետաձգէ այդ պատասխանատու քայլը: Այլ տեսանկիւնէ՛ն՝ անոնք կրնան խոյս տալ այդ իսկ պատասխանատուութիւնէն: Անոնք կը գիտակցին, որ իրենց հանդիպումն է կարեւոր է յարաբերութիւններու յետագայ ընթացքը, եւ ատի կայ կրնայ վախցնել զիրենք»:

Իսկ յարաբերութիւններու ո՞ր փուլին ճիշդ է ծանօթութիւնը ծնողներու հետ: Հոգեբանները կարծիքով՝ շատ կարեւոր է, թէ ինչ մտածելակերպի տէր ընտանիքի հետ գործ ունինք: Եթէ ընտանիքը այնպիսի մօտեցում ունի այս հարցին, որ իրենց աղջիկը մէկ տղու հետ պէտք է շփուի եւ ամուսնանայ, ուստի այս պարագային անոնց հետ ծանօթութիւնը պիտի դիտուի իբրեւ շատ լուրջ քայլ, ամուսնութեան խոստում: Եթէ ընտանիքը աւելի ազատ է, կը կարծէ, թէ տարբեր տարիքներու մէջ աղջիկը հնարաւոր է տարբեր տղաներու հետ շփուի, այս պարագային ծանօթութիւնը պարզապէս քիչ մը լրջութիւն պիտի հաղորդէ յարաբերութիւններուն: Սակայն, ոչ մէկ պարտադրանքի մասին խօսք կրնայ ըլլալ: Յետագայ հնարաւոր բաժանութիւնը այս ընտանիքը շատ դիւրին կ'ընդունի: Յանկալի տարբերակ է. երբ գոյգը կը հանդիպի եւ սկզբնական շրջանին ալ ծնողները կը գիտնան այդ մասին, յետագային աւելի դիւրին պիտի ըլլայ նաեւ անոնց ծանօթութիւնը: Չկայ որեւէ սահմանում, թէ երբ ճիշդ է ծնողներու հետ հանդիպելը, սակայն գնահատելի տարբերակ է, երբ երկու կողմերն ալ վստահ են իրենց զգացումներուն մէջ, երբ յարաբերութիւնները արդէն հասունացած են, երբ կայ իրարու հետ կեանքը կապելու ցանկութիւն: Շատ կարեւոր հարց է նաեւ, թէ ուր պէտք է հանդիպիլ ծնողներուն հետ: Յա-

ճախ տղաներուն կը թուի, թէ ծնողներու հետ հանդիպումը իսկական պատերազմ է, ուր միշտ կը յաղթեն ծնողները: Իսկ այս պատերազմական վիճակը քիչ մը դեկալատրելու համար անոնք կը նախընտրեն չէզոք վայր, ուր ծնողները ո՛չ թէ տան տէրերն են, այլ՝ տղու նման՝ հիւր: Վերջին ժամանակներս շատ տարածուած երեւոյթ է, երբ աղջկայ ընտանիքին հետ ծանօթանալու նպատակով տղան կը հրաւիրէ անոնց որեւէ սրճարան կամ հաճելի վայր: Հոգեբանները կը նշեն, որ երբ հանդիպում տեղի կ'ունենայ ունէ մէկուն տան մէջ, սովորաբար տան տէրերը իշխող դերի մէջ կ'ըլլան, իսկ հիւրը՝ ենթակայի: Այս առումով աւելի դժուար է տղայի դրութիւնը, երբ ան պէտք է փորձէ լաւագոյնս ներկայանալ, իսկ ծնողները լաւ մը «պրպտեն»: Իրավիճակը լարուած պիտի ըլլայ բնականաբար: Իսկ սրճարանի կամ որեւէ այլ վայրի մէջ շփումը աւելի դիւրին պիտի ըլլայ ե՛ւ տղայի, ե՛ւ ծնողներու համար: Այս տարբերակը քիչ մը դժուար կ'ընդունուի հայկական ընտանիքներու մէջ, քանի որ ընդունուած տարբերակը աղջկայ ծնողներու հետ ծանօթանալու՝ անոնց հիւր երթալն է», կը նշէ հոգեբան Անուշ Ալեքսանեան:

Ի՞նչ ընել, երբ աղջկայ ծնողները կը պարտադրեն, որ իրենց հետ հանդիպման համար տղան իրենց տուն երթայ: Խորհուրդ աղջիկներուն. Դուք շատ լաւ կը գիտակցիք, որ հանդիպման պատճառը դուք էք: Կը թուի, թէ աղջիկը այս պարագային լաւագոյն իրավիճակի մէջ է. ծանօթ է երկու կողմին ալ: Սակայն ծանօթացնէ - լը նոյնքան բարդ գործընթաց է, որքան ծանօթանալը: Նախ պէտք է պատրաստուիլ ատոր: Պէտք է ծնողներուն հեջիաթներ պատմել տղայի առասպելական բնատրութեան, ուժի ու խելացութեան մասին: Այս պարագային անոնք հետամուտ պիտի ըլլան թերութիւններ բացայայտելուն: Նախօրօք ներկայացուցէք նաեւ տղայի որոշ թերութիւններ, որոնք կը կարծէք, խօսակցութեան ընթացքին նկատելի պիտի ըլլան: Ծնողներէն խնդրեցէք աւելի մեղմ ու անմիջական մթնոլորտ ստեղծեն: Ձեր սիրելիին քանի մը խորհուրդ տուէք, թէ ինչ կը սիրեն ձեր ծնողները, ինչի հանդէպ խիստ բացասական վերաբերմունք ունին, ինչը անոնց համար ընդունելի է, իսկ ինչը՞ ոչ: Ընտրեցէք քանի մը նիւթ, որոնք հետաքրքրական են երկու կողմին ալ. չէ՞ որ դուք լաւ գիտէք, թէ՛ ծնողներուն, թէ՛ ձեր սիրելիին նախասիրութիւնները: Հոգեբանները կը կարծեն, թէ աղջիկները իրենց պէտք է շատ պատասխանատու չզգան իրենց յարաբերութիւններուն համար: Քանի որ, երբ կայ մէկը, որ իրեն պատասխանատու կը զգայ ուրիշներու յարաբերութիւններուն համար, ան աւելի շատ կը դառնայ խանգարող, քան՝ օգնող: Անոնք շատ աւելի դիւրին պիտի յարմարին, լեզու գտնեն, հասկնան իրարու, քան այն ժամանակ, երբ ունէ մէկը միջնորդէ: Անգամ հանդիպումէն ետք առաջացած կարծիքներուն խիստ ծայրայեղ մի մօտենալ: Բնական է, որ պիտի ըլլան բացասական կարծիքներ, պիտի խօսուի նաեւ թերութիւններու մասին: Երբ կը սկսիք առարկայականօրէն պաշտպանել որեւէ կողմ, լարումը աւելի կը մեծնայ: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

Գործերու Մէջ «Թաղուելու» Կործանարար Սովորութիւնը

Գործերու մէջ «Թաղուելու» կործանարար սովորութիւնը սկսած է ձեւաւորուիլ շատ շատոնց: Բայց ինչո՞ւ մենք կը ձգտինք այդ կեանքին: Ինչպիսի կեանքով ալ ապրինք, ինչպիսի մասնագիտութիւն ալ ընտրենք, մենք միշտ կանգ առնելու ժամանակ չունինք: Կը նշուի, որ մշտապէս զբաղուածութեան մէջ ըլլալը հիւանդութիւն է: Անիկա կը կործանէ մեր առողջութիւնը, կը խաթարէ բարեկեցութիւնն ու անշտապ շփումէն եւ նոյնիսկ ճաշին հաճոյք ստանալու մեր ունակութիւնը:

Երբ սկսաւ «համակարգչայնացումը», մենք կը կարծէինք, թէ այս ամէնուն իբրեւ արդիւնք քիչ աշխատելու հնարաւորութիւն պիտի ունենանք: Մենք կը կարծէինք, թէ ելեկտրոնային սարքերը մեր կեանքը աւելի դիւրին պիտի դարձնեն: Սակայն չկայ այն հանգամանակները, որոնք մասին կ'երագնէին ելեկտրական սարքեր ստեղծողները: Ամէն ինչ աւելի վատ է: Մարդիկ, որոնք իրենց «հասարակութեան վերնախաւ» կը համարեն, արդէն չեն ալ կրնար յստակ սահմանագիծ անցընել իրենց աշխատանքի եւ կեանքի միջեւ: Անոնք կ'աշխատին մինչեւ ուշ գիշեր:

Երբ մեր փոքրիկները անկո-

ղին մտնեն, մենք դարձեալ առցանց վիճակի մէջ ենք:

Շատերու համար գերխնդիր է ելեկտրոնային նամակը: Նամակները հեղեղի նման կը թափին այնտեղ: «Հասցէատէլը» ամէն օր կը խոստանայ անոնց «վերջը» յայտարարել, սակայն ապարդիւն, նոյն երեւոյթը կը կրկնուի տարիներ շարունակ: Սակայն ինչի՞ համար պէտք է ատիկա: Ի հարկէ, խօսքը անոնց մասին չէ, որոնք օր ու գիշեր կ'աշխատին ընտանիքը կեռակրելու համար:

Լիարժէք կեանքով ապրելու համար մենք պէտք է կարենանք կեդրոնանալ ու գիտակցուած ապրիլ կեանքը: Փողոցը հին ընկերո՞ջ մը հանդիպած էք: Գոտէ՞ք հինգ վայրկեան անոր հետ զրուցելու համար:

Աւարտած էք հաշուետուութիւնը: Դուք արժանի էք թէ՛ խմելու եւ զրուցելու գործընկերներու հետ: Անջատուեցէ՛ք համացանցէն: Մի՛ գնէք iPad: Տան բոլոր սենեակներուն մէջ հեռատեսիլ մի՛ դնէք: Գիտակից կերպով ապրելու պարագային միշտ գիտե՛ս ինչը եւ ինչպիսի հետեւողականութեամբ ընել: Իսկ ինչը չես հասցուցած, կը նշանակէ ֆիզիքապէս հնարաւոր չէ: Սորվեցէ՛ք ազատիլ կարծրատիպերէն:

Տղամարդու Յետ Ի՞նչ Նիւթերու Շուրջ Կարելի է Զրուցել

Իւրաքանչիւր օրիորդի, որուն յարաբերութիւնները տղա - մարդու հետ կը գտնուին «ծաղկային»՝ սկզբնական փուլի մէջ, կը տանջէ մէկ հարց՝ ինչի՞ մասին զրուցել անոր հետ յաջորդ ժամադրութեան ընթացքին: Այստեղ պիտի ներկայացնենք տղամարդու հետ խօսակցութեան թեմաներու արդիւնաւէտ հնգեակը:

1) Ասպարէզ եւ գումար: Եթէ ձեր ընտրեալը գործարար մարդ է եւ ոչ թէ արուեստագետ, նրբօրէն հարցուցէք անոր, թէ այսօր ո՞ր բնագաւառին մէջ արժէ ներդրում կատարել: Իսկ հարցնես ետք դիմացէ՛ք... Պատաստուեցէ՛ք երկար նիւթ լսելու, բայց մի շտապէ՛ք ձանձրանալու եւ առանց հասկնալու թափահարելու գլուխը: Լսեցէ՛ք զինք, հնարաւոր է որ այդ տեղեկութիւնը ձեզի պէտք ըլլայ յետագային:

2) Զինորսութիւն: Այս բնագաւառը, իբրեւ կանոն, հոգեհարազատ է տղամարդոց: Եթէ նախորդ խօսակցութիւններէն դուք գիտէք, որ ձեր ընտրեալը եւս ձկնորսութեան սիրահար է, ուստի ճիշդ ժամանակն է ատոր մասին զրուցելու: Խնդրեցէ՛ք, որ գուարճալի դէպքեր պատմէ իր ձկնորսական արկածներէն: Ան, ի հարկէ, քիչ մը ինքզինք կրնայ գովել, քիչ մը ճիշդը ըսել, բայց կրնաք վստահ ըլլալ, որ զրոյցը ոչ միայն հետաքրքրական պիտի ըլլայ անոր համար, այլեւ գուարճալի՝ ձեզի համար:

3) Քաղաքականութիւն: Տղամարդոց համար հաճելի է ցոյց տալ

իրենց քաղաքական միտքը: Առիթ ստեղծեցէ՛ք, որ ան արտայայտուի, հետաքրքրութիւն ցոյց տալով այդ բնագաւառին նկատմամբ: Նկատի ունեցէ՛ք՝ պիտի ձգէք ձեր սիրելիին վրայ պատշաճ զրուցակիցի տպաւորութիւն, այնպէս որ լաւ պիտի ըլլայ խօսակցութիւնը բանալին առաջ քիչ մը հետաքրքրուիք քաղաքական կեանքով:

4) Ֆութպոլ: Այստեղ, բնականաբար, ամէն ինչ պարզ է: Դուք հաւանաբար չէք կրնար տանիլ այդ 11 «ապուշներ»-ը, որ, չէք գիտեր ինչու, կը վազեն գնդակի մը ետեւէն, բայց, եթէ չէք ուզեր անիմաստ վիճիլ, այլ հակառակը՝ ձեզի պէտք են բարիդարացիական յարաբերութիւններ, ուստի առաջ... Սորվեցէ՛ք այդ «անիծեալ» ֆութպոլային կանոնները եւ խօսակցութեան ժամանակ հարցեր տուէ՛ք անոր, օրինակ, իր սիրելի խումբի վերջին խաղին մասին:

5) Գրականութիւն, կենսագրութիւններ: Հաւանաբար գարմանաք, բայց տղամարդոց զգալի մէկ մասին կը հետաքրքրեն պատմական դէպքերն ու իրադարձութիւնները, կարելոր դիրքերու հասած մարդոց կենսագրութիւնները եւ այլն: Նման թեմայով զրոյցը, հաւատացէ՛ք, պիտի հետաքրքրէ նաեւ ձեզի, պարզապէս կրկին կայ անհրաժեշտութիւն նախապէս թեմային ծանօթանալու: Ասիկա, անշուշտ, պիտի ըլլայ աւելի հետաքրքրական ուսումնասիրութիւն, քան ֆութպոլի ու քաղաքականութեան պարագային:

Մաքրուի Թաթուլեան-Խաչատուրեանի

Շարունակուած էջ 15-էն
յուզիչ, սիրտէ միտքէ ծաղկած յուշեր, ուր կայ նաեւ տա սը տարիներու տառապանք, որբ բա-

րեկամիս՝ Հայկազ Խաչատուրեանին հիւանդանալը պատճառ կը դառնայ անոր զոյգ ոտքերու սղոցումին, տառապանքի բարձրացած լեռ հեղինա կին համար, որ գրա-

Աֆրոսիթի Կանացի Ուժը. Ինչպէ՞ս Դառնալ Միակը Սիրելի Տղամարդու Համար

Տղամարդիկ հիասքանչ արարածներ են, համարեա աստուածային: Անոնք կրնան ընել գրեթէ ամէն ինչ, բայց նման են համակարգիչի, որ նոյնպէս կրնայ շատ ու շատ աշխատանքներ կատարել, բայց, եթէ լիցքաւորուած չէ, կը վերածուի հասարակ մետաղի... Տղամարդոց, նոյնպէս, պարբերաբար անհրաժեշտ է ուժ ստանալ, որ ան կրնայ ունենալ միմիայն կնոջ հետ շփուելով: Որոշ տղամարդիկ կը միանան կնոջ մը ու ողջ կեանքի ընթացքին ուժ կը քաղեն նոյն այդ կնոջմէ, ոմանք ալ կը սիրեն ուժ ստանալ շատերէն ու քիչ-քիչ:

Ի՞նչ ընել, որ տղամարդը չյայտնուի երկրորդ խումբին մէջ ու բաւարարուի միայն քեզմով:

Պատասխանը պարզ է. ապահովել անոր անհրաժեշտ ուժի ողջ պաշարով: Իսկ ուրկէ՞ վերցնել այդ ուժը. չէ՞ որ կարծիք կայ, թէ տղամարդիկ իրենց վիզին միայն փողկապ կը կրեն, իսկ կանայք կը կրեն մանեակներ, երեխաներ, ընտանիք, տուն ու տղամարդը իր փողկապով: Դժուար է այսքանով հանդերձ չսպառիլ, չչարանալ ու մերժել սիրելին անգամ ամենակենցաղային հարցերու ժամանակ, ալ ուր մնաց ուժ փոխանցելը:

Բայց կը պարզուի, որ կայ մշտական կանացի ուժ մը՝ Աֆրո-

սիթէի ուժը, որ պարզապէս պէտք է մշտապէս արթուն պահել:

- Իսկ արթուն պահելու համար լաւագոյն ու ամենադիւրին ձեւը դուք քեզ լաւ վիճակի մէջ պահելն է, դուք քեզ սիրելը: Պէտք չէ ամբողջութեամբ նետուիլ կենցաղային հոգերու մէջ ու մոռնալ անձիդ մասին: Կնոջ տրամադրութիւնը բարձր է, երբ ան ինքզինք գեղեցիկ կը զգայ, ասիկա ապացուցուած փաստ է: Որքան ալ զբաղած էք, յոգնած կամ անտրամադիր, կէս ժամ գոտէք ձեզի համար: Յիշեցէ՛ք՝ միայն ձեզ սիրել կարենալով դուք հնարաւորու - թիւն պիտի ունենաք այդ սէրը ուրիշ մէկուն փոխանցելու:

- Աֆրոսիթի ուժով լեցուելու երկրորդ ձեւը երգելն է: Երգեցէ՛ք, կարելոր չէ թէ ինչպէս: Կարելորը երաժշտութեամբ շրջապատուած ըլլալն է: Երգեցէ՛ք ու չմոռնաք նաեւ պարելու, շարժելու մասին: Զէ՞ որ սեռային յարաբերութիւնը պար է, ու եթէ դուք շարժուէ չէք, ճիշդ պահուէ չէք կրնար կատարել սիրոյ մեծ պարը:

- Ժամանակ գտէ՛ք ընթերցանութեան համար: Թէկուզ գիշերը... Աւելի լաւ է երկու ժամ պակաս քնանալ, բայց լեցնել հոգեւոր աշխարհը գրականութեամբ ու արուեստով: Ինքնակատարելագործուեցէ՛ք. ասիկա կարելոր խնդիր է:

Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը

Շարունակուած էջ 7-էն

րազարդ յուշագիրք մը, որուն մէջ իրենց ողջ ընդհանրութիւններն ունէին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Հայրապետը եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ: Մէջ ընդմէջ ողջ ընդհանրութեամբ ելուցիւններ ունեցան Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեան, յանձնախումբի ատենապետ Սիմոն Աճըլ-խաճօղլու, խմբավար Ստեփան Սրկ. Կէօզլումեան, Յովհաննէս Գուլաք եւ ուրիշներ: Բոլորն ալ դրուատեցին Խաչատուրեան Դպրաց Դասի եկեղեցասիրութիւնն ու նուիրուածութիւնը, մանաւորաբար իւրօրինակ ծառայասիրութիւնը, որ ինքնին ուսանելի օրինակ է երիտասարդ սերունդներուն համար:

Տօնական միջոցաւորումը համեմունեցաւ գեղարուեստական ճոխ յայտագրով, որուն իրենց մասնակցութիւնը բերին «Լիլիան» պարի համոյթը, Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբն ու անհատ արուեստագէտներ:

Աւարտին տեղի ունեցաւ 40 ամեակի կարկանդակի հատման արարողութիւնը, մասնակցութեամբ

լած է 28 էջ: Նաեւ «Նուիրական սէրը, որուն պէտք ունինք այսօր»: «Մէջը բալասան է մեր հոգեկան տագնապներուն եւ կորուստը՝ մարդը կը դարձնէ գազան իր նմանին հանդէպ»:

Ղարաբաղն ու Սումկայիթն ալ հոս են քննականօրէն, բայց ոչ անէճքով: Խօսքերու շարք Նոր Տարիները՝ նոր, յուսալի նիւթ: Պատերազմի չարագուշակ 40-ամեակ: Պատերազմը ատելու լեզուով:

ղեկավարութեան եւ հիւր անձնաւորութիւններու: Այնուհետեւ երգչախումբի բոլոր անդամները ստացան չիշատակի նուէրներ: Առանձին յուշանուէրով մը պարգեւատրուեցաւ վաստակաշատ խմբավար Սեփիան Սրկ. Կէօզլումեան:

Իր սրտի խօսքին մէջ Սեպուհ Սրբազան անդրադառնալով Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբի օտաշատ գործունէութեան ի մէջ այլոց ըսաւ նաեւ թէ «Հայրենիքի կառուցման գործին մեծապէս ներկայութիւն է նաեւ այս երգչախումբը»:

Ելուցի ընկերակցութեամբ Սրբազան Սրբազան մաղթեց որ «Երգչախումբը հաւատքով աւելի զօրացած եւ օրհնուած, նոր եռանդով ու ոգեւորութեամբ շարունակէ իր անքան նուիրեալ կերպով սկսած ծառայութիւնը եկեղեցիին, արեւմտեան մթնոլորտին եւ ի փառս Աստուծոյ»:

Տէրունական աղօթքով վերջ գտան 40 ամեակի տօնական հոգեպարար հանդիսութիւնները:

Շնորհաւորութիւններ եւ բարի երթ սիրելի երգչախումբին: Վարձքերնիդ կատար:

Մտորումներ նաեւ եկած ծաղիկներէ՝ հասած գրականութեան: Յոյսի կարաւան նոր սերունդի մասին: Ղազարոս Աղայեանն ալ հոս է, որ հնչակեան է: Ապա, բազմատասնեակ մասնախօսականներ սիրելիներու մասին, ուր յիշուած է նաեւ անունը Դամասկոսէն հնչակեան գործիչ Կիւլիգար Կարդացողեանին եւ Պէպօ Սիմոնեան գրագէտ «Կտոր մը Երկինք»ին:

Մաքրուհիէն յետոյ մաքուր հայերէնով զրոյց կ'ունենանք:

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի Հաւաքականը Խոշոր Հաշուով Յաղթեց Զիբրալթարին



Ազգերի լիգայի խաղարկութեան խմբային փուլի Զիբրալթար-Հայաստան հանդիպումն աւարտուեց Հայաստանի յաղթանակով: Հաշիւը բացեց Զիբրալթարը 10-րդ րոպէին, սակայն 27-րդ րոպէին Եուրա Մովսիսեանը խփեց պատասխան կոլը: Երկրորդ խաղակէստում Եուրա Մովսիսեանը դառնում է եւս երեք կոլի հեղինակ: Սա առաջին պոկերն է Հայաստանի հաւաքականի պատմութեան մէջ:

Կոլերի հեղինակ են դառնում նաեւ Արթուր Քարտաշեանը եւ Ալեքսանդր Կարապետեանը: 78-րդ րոպէին Զիբրալթարը եւ մէկ գոլ է խփում:

Հայաստանի հաւաքականը յաղթում է 6:2 հաշուով: Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի ֆէսբուքյան էջից տեղեկանում ենք, որ Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչ Արմէն Գիւլբուրգեանը յետխաղային մամուլի ասուլիսը չի կայացել, քանի որ Զիբրալթարցի լրագրողները չէին ներկայացել:

Յիշեցնենք, որ Հոկտեմբերի 10-ին Երեւանի Վազգէն Սարգսեանի անունան «Հանրապետական» մարզադաշտում Ազգերի լիգայի խաղարկութեան խմբային փուլի երրորդ տուրի Հայաստան-Զիբրալթար հանդիպումն աւարտուել էր Հայաստանի պարտութեամբ՝ 0:1 հաշուով:

Շուեդիայի Հաւաքականը Յաղթեց Թուրքիայուն

Ֆուտպոլի ՈւեֆԱ-ի Ազգերի լիգայում շարունակուում է խմբային փուլի 5-րդ տուրը:

Երկրորդ խմբային թուրքիայի հաւաքականը Կոնիայում ընդունեց Շուեդիայի թիմին եւ պարտութիւն կրեց նուազագոյն հաշուով:

Երկրորդ խմբում Շուեդիան 4 միաւորով երկրորդ տեղում է եւ 3 միաւոր հետ է առաջատար Ռուսաստանից: Թուրքիան 3 միաւորով վերջին տեղում է:

Ճ դիւբլիոնում Քոստովոյի հաւաքականը տանը 4:0 հաշուով պարտութեան մատնեց Մալթային: Ատրպէյճանը 2:0 հաշուով ուժեղ էր Ֆարերեան կղզիներից:

Երրորդ խմբի առաջատարը Քոստովոն է՝ 11 միաւոր: Ատպէյճանը երկրորդ տեղում է՝ 9 միաւոր:

Անգլիան Յաղթանակ Տարաւ Խորուաթիայի Նկատմամբ Եւ Մտնաւ Փլեյ-օֆֆ

ՌեՆԵԱ-ի Ազգերի լիգայի ընտրական մրցաշարի 6-րդ տուրում Անգլիայի հաւաքականը սեփական դաշտում կամային յաղթանակ տարաւ Խորուաթիայի ընտրանու նկատմամբ եւ մտաւ փլեյ-օֆֆ:

Լոնտոնի «Ուեմբլի» մարզադաշտում կայացած խաղի հաշիւը 57-րդ րոպէին բացեց խորուաթների յարձակուող Անդրէյ Կրամարիչը, իսկ 78-ին փոխարինման մտած Զեա Լինգարդը վերականգնեց հաւասարութիւնը: Խաղի ելքը վճռեց 85-րդ րոպէին Հարի Կէյնի խփած կոլը:

Այդպիսով, Անգլիայի հաւաքականը 2:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ, վաստակեց 7 միաւոր եւ զբաղեցրեց առաջին տեղը՝ մէկ միավորով առաջ անցնելով Սպանիայից: Անգլիացիները եկող տարի կը մասնակցեն Պորտուգալիայում կայանալիք եզրափակիչ մրցաշարին, իսկ ահա պարտութիւն կրած խորուաթները Ազգերի լիգայի յաջորդ մրցաշարում հանդէս կը գան Ե լիգայում:

Պելգիայի Հաւաքականը Բաց Թողեց 5 Կոլ Եւ Զյաղթեց Խմբուն

Ֆուտպոլի ՈւեֆԱ-ի Ազգերի լիգայի A դիւբլիոնի երկրորդ խմբի յաղթողի կոչումը նուաճեց Շուեյցարիայի հաւաքականը:

Խմբային փուլի վերջին՝ 6-րդ տուրում շուեյցարացիները տանը 5:2 հաշուով կամային յաղթանակ տարան Պելգիայի հաւաքականի նկատմամբ: 17-րդ րոպէին պելգիացիները յաղթում էին 2:0 հաշուով, սակայն չկարողացան պահպանել առաւելութիւնը: Դաշտի տէրերից հեթ-տրիկի հեղինակ դարձաւ Լիսաբոնի «Բենֆիկայի» յարձակուող Հարիս Սեֆերովիչը:

Շուեյցարիայի եւ Պելգիայի հաւաքականները հաւաքեցին 9-ական միաւոր, սակայն լրացուցիչ ցուցանիշներով խմբում առաջին տեղը գրաւեցին շուեյցարացիները: Խմբում երրորդ տեղը գրաւեց Իսլանդիայի հաւաքականը, որը պարտուեց բոլոր խաղերում եւ յաջորդ մրցաշրջանում հանդէս կը գայ Ազգերի լիգայի B դիւբլիոնում:

C դիւբլիոնի երկրորդ խմբում յաղթեց Ֆինլանդիայի հաւաքականը,

Վալերի Յովհաննիսեանի Ընտանիքը Գնել է Մոսկուայի «Արարատը»

Ռուս ֆուտպոլային մէնէճըր Վալերի Յովհաննիսեանի ընտանիքը գնել է Մոսկուայի «Արարատի» բաժնետոմսերի ընդհանուր փաթեթը: Այդ մասին Յովհաննիսեանը յայտնել է «360» ալիքի եթերում:

«Դա այդպէս է: Առաջիկայում մենք էջեր կ'ունենանք սոցցանցերում, որպէսզի պահպանենք կապը երկրպագուների հետ: Ակումբի վերաբերեալ մնացած տեղեկատուութիւնը կը լինի աստիճանաբար: Մենք ոչ մի տեղ չենք շտապում - սակ է Երեւանի «Ուլիսի» նախկին նախագահը:

Յիշեցնենք, որ նախորդ մրցաշրջանում «Արարատը» առաջին տեղն էր զբաղեցրել Ռուսաստանի երկրորդ դիւբլիոնի «Կենտրոն» գոտում, սակայն ակումբը հրաժարուել էր Ռուսաստանի առաջին դիւբլիոնի մասնակցութիւնից: Մոսկուայի «Արարատի» խաղացողների մի մասը տեղափոխուել էին «Արարատ-Արմենիա», որն այս տարի հանդէս է գալիս Հայաստանի Բարձրագոյն խմբում:



Սաուդեան Արաբիայի Արքայազնը Պատրաստ է 3 Միլիարդ Եւրո Վճարել «Մանչեսթեր Եունայթեդի» Համար

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» համասեփականատէր Աւրամ Գլէյզըրը հանդիպում է ունեցել Սաուդեան Արաբիայի արքայազն Մուհամեդ Ալ Սաուդի հետ, որը ցանկանում է ձեռք բերել մանչեսթերեան ակումբի բաժնետոմսերը: Գլէյզըրը Սաուդեան Արաբիայում մասնակցել է Misk Global տնտեսական ֆորումին, որի ընթացքում էլ բանակցել է արքայազնի հետ: Մուհամեդ Ալ Սաուդը պատրաստ է «Մանչեսթեր Եունայթեդի» համար վճարել 3 միլիարդ եւրո, հաղորդում է The Sun-ը:

Անգլիական մամուլի տուեալներով, Գլէյզըրների ընտանիքը մտադիր չէ վաճառել մանչեսթերեան ակումբի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, սակայն պատրաստ է շահաւէտ գործարքի դէպքում գիշել բաժնետոմսերի մի մասը:

2005 թուականին Գլէյզըրների ընտանիքը «Մանչեսթեր Եունայթեդը» գնել է 790 միլիոն ֆունտ ստերլինգով:

Իբրահիմովիչը Մտն է «Միլան» Վերադառնալուն

Ամերիկեան «Լոս Անճելոս Գեյաքսի» շուէդ յարձակուող Զլատան Իբրահիմովիչը մօտ է իտալական «Միլան» վերադառնալուն: Կողմերի բանակցութիւնը մօտ է դրական աւարտի, հաղորդում է Sky Sport italia-ն: 37-ամեայ Իբրահիմովիչը համաձայն է խաղալ տարեկան 4 միլիոն եւրո աշխատավարձով:

«Միլան» առաջարկում է կէս տարուայ պայմանագիր, մէկ տարով երկարաձգելու հնարաւորութեամբ, Իբրահիմովիչը ցանկանում է կնքել 1.5 տարուայ պայմանագիր: Սպասուում է, որ ֆուտպոլիստի վերադարձը տեղի կ'ունենայ Յունուարին:

Իբրահիմովիչը «Միլանում» հանդէս է եկել 2010-2012 թուականներին՝ 85 խաղում խփելով 56 կոլ:

ՄԼՍ-ի ընթացիկ մրցաշրջանում Իբրահիմովիչը մասնակցել է 27 հանդիպման, խփել է 22 կոլ, կատարել է 7 կոլային փոխանցում:

Ուեյն Ռունի. Սա Ուղեւորութիւն Եր, Որը Երբեք Չեմ Մոռան

Ամերիկեան «Դի Սի Եունայթեդի» յարձակուող Ուէյն Ռունին ֆուտպոլի Անգլիայի ազգային հաւաքականում վերջին հանդիպումն անցկացնելուց յետոյ կիսուել է տպաւորութիւններով: 33-ամեայ անգլիացին նախօրէին մասնակցեց ԱՄՆ-ի հաւաքականի դէմ Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կայացած ընկերական խաղին (3:0), որում փոխարինման դուրս եկաւ 58-րդ րոպէին:

«Շնորհակալութիւն բոլոր անգլիացի երկրպագուներին այսօրուայ աջակցութեան ու բոլոր տարիների համար, ես գնահատում եմ դա: Սա ուղեւորութիւն էր, որը երբէք չեմ մոռանայ», - թուիթերեան էջում գրել է Ռունին:

Յիշեցնենք, որ դա Ռունիի 120-րդ հանդիպումն էր Անգլիայի հաւաքականի կազմում: Ազգային թիմում անցկացրած խաղերի ցուցանիշով նա գիշում է միայն լեգենդար դարպասապահ Պիտեր Շիլտոնին (125 խաղ):

Ուէյն Ռունին Անգլիայի հաւաքականում չէր խաղում 2016 թուականից: Նա ազգային թիմի պատմութեան լաւագոյն ումբարկուն է 53 գոլով:

որը վերջին տուրում 0:2 հաշուով պարտուեց հունգարացիներին: Խմբի միւս խաղում յոյները տանը նուազագոյն հաշուով պարտուեցին Էսթոնիայի հաւաքականին: Ֆինլանդիայի հաւաքեց 12 միաւոր, Հունգարիան՝ 10, Յունաստանը՝ 9, իսկ Էսթոնիան՝ 4: Յաջորդ մրցաշրջանում Ֆինլանդիայի հաւաքականը կը բարձրանա Ե դիւբլիոն:

ՄԱՐԱԶԴ



ՏՈՒՔԹ. ԳԷՈՐԳ ՔԷՇԻՇԵԱՆ
(Ծնեալ՝ Օգոս. 24, 1931ին)

Սրտի դառն կակիծով կը գոժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ տղթ. **Գէորգ Քէշիշեանի** մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 16, 2018ին:

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ **Կիրակի, Դեկտեմբեր 2, 2018ին, կէսօրէն ետք ժամը 4ին, Պըրպէնքի Ս. Ղեւոնդեանց Առաջնորդարանիստ տաճարին մէջ, 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504:**

Սգակիրներ՝ Այրին՝ Սէսիլ Քէշիշեան Զաւակը՝ Ալէք Քէշիշեան Դուստրը՝ Ալին եւ Քիզիլ Թրօյր եւ զաւակները՝ Լուլու եւ Ճեսի Աներորդին՝ տղթ. Սիմոն եւ Արփի Սիմոնեան եւ զաւակները Քենին՝ Ռիթա Պալեան եւ զաւակները (Վըրճինիա) Քենին՝ Անի Թոթայ եւ զաւակները (Մերիլինտ) եւ համայն Պալիկեան, Գուշեան, Գասպարեան, Գալստեան, Աժտահարեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները

Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել **ՀԲԸՄին, Թէքէյեան Մշակութային Միութեան կամ Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ վերաշինութեան:**

Ս. Յակոբ Եկեղեցւոյ Զիմնադրութեան

Շարունակուած էջ 8-էն

եանի առիթով աղօթքով ենք յիշում Եկեղեցու ննջեցեալ հիմնադիրներին եւ հայցում Երկնաւորից, որ նրանց հոգիներին պարգեւի խաղաղութիւն եւ հանգստութիւն»:

Օրուան հանդիսավարն էր Արժ. Տ. Վազգէն Քհն. Մովսէսեանը: Սեղանի օրհնութիւնը կատարուեցաւ Ս. Յակոբ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Յարութիւն Քհնյ. Թաշճեանին: Ներկայ էին Թեմակալ Առաջնորդը, ծխականներ, բարերարներ եւ հաւատացեալներ: Յովնան Սրբազանը իր սրտի խօսքին մէջ ըսաւ. «Այսօր Ս. Յակոբ 75-ամեակն է որ կը նշենք: Այս պատմական օրը պէտք է առիթ ըլլայ վերազարթօնքի եւ հոգեպէս վերանորոգուելու: Այսօրուայ տօնակատարութիւնը կ'իմաստաւորուի այն ատեն, երբ Ամենակալ Աստուծոյ կոչին կը պատասխանենք նոր տեսիլքով եւ յանձնառութեամբ՝ անսակարկ հաւատքով եւ անձնուէր գոհողութեամբ Աստուծոյ եւ Եկեղեցիին ծառայելու: Մեր կեանքին մէջ պահեր կան, երբ կը զգանք մեր տկարութիւնն ու անկարողութիւնը: Ահա այդ ժամանակ պէտք է խաչին վրայ իր կեանքը զոհած Աստուածորդուն նայինք եւ իրմէ սորվինք գոհողութեան եւ սիրոյ գերագոյն դասը: Հաւաքական եւ համայնական կեանքն ալ

նոյնպէս գոհողութիւն կը պահանջէ: Տարիներ շարունակ դուք միասնաբար Քրիստոսի սիրով աշխատեցաք, գործեցիք, ծառայեցիք, սորվեցուցիք: 75-ամեակը պէտք է նոր իրագործումներու եւ նուաճումներու առիթ հանդիսանայ: Այս ոգիով ու նախանձախնդրութեամբ շարունակեցէք ձեր եկեղեցանուէր եւ ազգօգուտ ծառայութիւնը»:

Ընթրիքի ընթացքին կատարուեցաւ գեղարուեստական գողտրիկ յայտագիր մը եւ ապա չատուկ տեսարկով մը Ս. Յակոբ Եկեղեցւոյ հիմնադրութեան եւ գործունէութեան պատմականը ներկայացուեցաւ:

Ս. Յակոբ Եկեղեցին տարիներ շարունակ դարձաւ հայ հաւատեացեալին հոգեւոր եւ ազգային բնօրրանը, որմէ բազմաթիւ հոգիներ ծնունդ առին ու վերանորոգուեցան: Ս. Յակոբ Եկեղեցին իր յարակից դպրոցով հայ գիրն ու մշակոյթը մշտաբար պահեց՝ հայ աշակերտին հոգևոյն մէջ քրիստոնեայ եւ հայ ըլլալու գիտակցութիւնը դաշտելով: Ուժ ու կորով կը մղվէինք Ս. Յակոբ Եկեղեցւոյ մեծ ընտանիքին՝ հոգեւոր հովիւին, ծխական խորհուրդին, տիկնանց միութեան եւ յարակից մարմիններուն՝ իրենց քրիստոսաուղի ծառայութիւնը շարունակելու եւ իրենց ներդրումը բերելու հայ համայնքէն ներս:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Փաստինայի լաւ շրջանի մէջ 2 ննջարան, նստասենեակ, լուսացքատուն, central air condition: Հասցէն՝ 1521 N. Hill Avenue, Pasadena, CA 91104: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել Պօղոսին՝ 626-533-0083 թիւին: Տունը քանի մը աստիճան ցած է, (step one): No pets, no section 8:

Գործաւոր Կ'ուզուի

Փաստինայի մէջ Gas Station մը գործաւորի կարիք ունի: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 626-5789200 թիւին:

«Սիրուն Երեւան»

Շարունակուած էջ 13-էն

Աւարտին բոլոր ներկաները, վարժարանիս երգչախումբին առաջնորդութեամբ, յոտնկայս երգեցին «Երեւան-էրեբունի» սքանչելի երգը: Ապա տեղի ունեցաւ վիճակահանութիւն:

Ամբողջ յայտագիրը, իր ընդունելութեամբ եւ գեղարուեստական բարձրամակարդակ ներկայացումով՝ հոգեկան խորունկ լիցք եւ մեծ ուրախութիւն պատճառեց բոլոր ներկաներուն, իսկ աշակերտներուն սիրտը պարուրեց խորունկ

գիտակցութեամբ՝ հանդէպ ազգային արժէքներուն եւ սրբութիւններուն:

Ներկաները արբեցած օրուան խորհուրդով եւ մեկնելով աշակերտներու ներկայացուցած հայաբոյր յայտագրէն ու անոնց մատուցած բարի ծառայութենէն, իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները կատարեցին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին:

Վարձքը կատար մեր սքանչելի աշակերտներուն, կազմակերպիչ ուսուցիչներուն եւ ձեռնարկը քաջալերող ներկաներուն:

Ուրուկուէյի Զայ Զամայնքին Զետ

Շարունակուած էջ 13-էն

նացուց յատկապէս հայերէնի նահանջի խնդիրը: Միւթար Հայրապետեան նշեց, որ յառաջիկային կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը, կրթական մասնաւոր հատուածի ներկայացուցիչները կը նստին մէկ սեղանի շուրջ,

կապ կը հաստատեն սփիւռքի տարբեր համայնքերու հետ՝ գտնելով իւրաքանչիւր համայնքի առանձնայատկութիւններէն բխող լուծումներ:

«Հայաստանը մեր երկիրը կը համարենք, թէեւ ծնած ենք Ուրուկուէյի մէջ», - ամփոփեցին հանդիպումը տեսակապի մասնակիցները:

Պէյրուսի Զայկազեան Զամալսարան

Շարունակուած էջ 14-էն

դասական ուղղագրութեամբ լոյս տեսնող Սփիւռքի մէջ հայատառ միակ հայագիտական տարեգիրքն է: Այնտեղ կը հրատարակուի հայոց պատմութեան ու մշակոյթին նուիրուած գիտական յօդուածներ, անտիպ փաստագրական նիւթեր ու գրախօսականներ: Մեզի հետ կ'աշխատակցին Հայաստանի, սփիւռքի եւ օտարագրի հայագէտներ: 38-րդ հանդէսին մէջ գետեղուած է 40 յօդուած: Հանդէսն ունի տարբեր բաժիններ, գրախօսութիւններ, ինչպէս նաեւ յայտնի հայագիտական գործիչներու մասին մահախօսականներ», - ըսած է Ա. Տաքէսեան:

Այլ կրթութեան, գիտութեան եւ մարմնամարզութեան նախարար Նարինէ Աղաբալեան ըսած է, որ նման հանդիպումները՝ Արցախի պետական եւ Պէյրուսի համալսարաններու միջեւ աւելի կ'ամրապնդէ համագործակցութիւնը:

«Անուրանալի է Հայկազեան հայագիտական հանդէսին դերը հայ ինքնութեան պահպանման եւ հայագիտութեան զարգացման գործին մէջ: Այն ստեղծուած է Հայոց ցեղասպանութենէն 40 տարի անց, այն ժամանակ, երբ թուրքի եաթաղանէն մազապուրծ եղած հայութիւնն առաջին անգամ

զգացած է ուժացման վտանգը: Այդ տարիներուն շատ կարեւոր էր այն նուիրեալներու ըրածը, որոնք հիմնադրած են հայկական դպրոցներ, վարժարաններ, հրատարակած պարբերականներ: Յանկալի կ'ըլլայ, եթէ այս տարեգիրքին մէջ յաճախակի տեսնենք արցախցիներու գիտական յօդուածները», - նշած է Ն. Աղաբալեան:

Այլ մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան նախարար Լեւոնիկ Յովհաննիսեանի խօսքով ալ 2011 թուականէն սկսած Արցախի մտաւորականներու յօդուածները կը սպաւորուին Հայկազեան հայկական հանդէսին մէջ:

«Կարեւոր է, որ գիտական երկու կեդրոններուն միջեւ կապն ալ աւելի ամրապնդուի, քանի որ այն աւելի մեծ նշանակութիւն կ'իւնենայ հայապահպանութեան գործին մէջ: Այսօր Սփիւռքը հայ ինքնութեան պահպանման խնդիրներու առջեւ կանգնած է եւ մեր համագործակցութիւնն իր ազդեցութիւնը կ'ունենայ այդ հարցերու լուծման գործին մէջ», - ըսած է Լ. Յովհաննիսեան:

Ձեռնարկին ներկայ էին Պէյրուսի Հայկազեան համալսարանի ներկայացուցիչներ, ԱՐՊՀ դասախօսներ, ուսանողներ եւ այլք:

Նուիրատուութիւն

Լոնտոնահայ ծանօթ անձնաւորութիւններէն եւ «Մասիս» շաբաթաթերթի բարեկամ Տիար Ասատուր Կիւզելեան, վերջերս լուրջ փորձանքէ մը ազատուելուն ուրախ առիթով, Պէյլանի Հայրենակցական Միութիւնը կատարեալ առողջութիւն կը մղվէ իր պատուոյ անդամին եւ առ այդ \$100 կը նուիրէ «Մասիս»ին:

Նոյն առիթով \$էր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան \$50 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին եւ \$50 Պէյլանի Հայրենակցական Միութեան:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ս.Դ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի վարչութիւնը շուտափոյթ ապաքինում կը մղվէ իր անդամներէն՝ Ընկ. Յարութիւն Կիւտէյեանին:

ԾԱԽՈՒ Է

Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» ամսագրի ակաճաւոր խմբագիր Աճորանիկ Ծառուկեանի «Նայիրի» ամսաթերթերու 1958-1975 տարիներու լաթակազմ հաւաքածոները: Զետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝ Վահէ Աջապահեանի (626) 354-5924:



ARMENIAN AMERICAN MUSEUM

Building Together. Leaving a Legacy.

Կառուցենք միասին: Փոխանցենք ժառանգութիւն:



Join the Groundbreaking Campaign!



Permanent Armenian Exhibition
Հայկական մշտական ցուցահանդէս

Traveling Multicultural Exhibitions
Բազմամշակութային շրջուն ցուցահանդէսներ

Performing Arts Theater
Կատարողական արուեստի թատրոն

Demonstration Kitchen
Ցուցադրական խոհանոց

Learning Center
Ուսումնական կեդրոն

Museum Archives
Թանգարանի արխիւներ

Քալիֆորնիոյ Հայ-Ամերիկեան Թանգարանը եւ Մշակութային կեդրոնը պատմական շինութիւն է, որ պիտի կառուցուի Կլենտէյլ քաղաքին մէջ: Կեդրոնը կը ներկայացնէ մեր պատմութիւնը, կը պահպանէ մեր մշակոյթը, եւ կը զօրացնէ մեր համայնքը: Մասնակցեցէ՛ք առաջին կարգի այս համաշխարհային եւ Մշակութային Թանգարանի եւ Կեդրոնի կառուցումին:

The Armenian American Museum and Cultural Center of California is a historic landmark developing in the City of Glendale. The center will share our story, preserve our culture, and strengthen the community. Take part in building the first world class museum and cultural center of its kind in America. Join and support the Groundbreaking Campaign by contributing today.

DONATE YOUR \$10 TODAY

TEXT "MUSEUM" TO 20222 OR VISIT JOINAAM.ORG

MAILING ADDRESS: 104 NORTH BELMONT STREET, SUITE 205, GLENDALE, CA 91206
The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization.
Your donation is tax-deductible allowed by law. Federal Tax ID: 47-2465341.

